AZG NEW SHABAT.QXD 21/08/2014 22:44 Page 1

22 ՕԳՈՍՏՈՍ 2014 ՈՒՐԲԱԹ 24(5334)

# Azg Ազգ

ISSN: 1829-1651

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Քաց կթողնե՞ն Լեւոն Հայրապետյանին

**Լավատեղյակ մի աղբյուրից «Ազգ»ը տեղեկացավ, որ մոսկվայաբնակ հայ բարերար եւ գործարար Լեւոն Հայրապետյանը կարող է մինչեւ շաբաթավերջ ազատ արձակվել կալանքից: Առայժմ հստակ չէ, թե ինչ հիմքով է նախադատությունը նրան ազատ արձակելու- գրավի՞, ինքնախոստովանական ցուցմունքի՞, թե՞...**

**Ինչպես հայտնի է, հայազգի գործարարը, որի առողջական վիճակը խիստ մտահոգիչ է, մեղադրվում է փողերի լվացման եւ ֆինանսական մեքենայությունների մեջ, որի համար նա ձերբակալվեց շուրջ մեկ ամիս առաջ, եւ դատարանի որոշմամբ նրա դեմ որպես խափանման միջոց ընդունվեց կալանքը, հակառակ բազմաթիվ բողոքների եւ միջնորդությունների: Արդարեւ, Հայաստանի ու Ռուսաստանի բազմաթիվ արվեստագետներ, զինվորական ու քաղաքական գործիչներ եւ առհասարակ համակիրներ բազմաթիվ միջնորդություններ ներկայացրին Լեւոն Հայրապետյանի կալանքը վերացնելու համար, սակայն նախադատական մարմինները ցարդ մնացին անդրդվելի:**

*ՕՐԵՐԻ ՀԵՏ*

## Լրագրողի եւ լրագրության գլխատումը

**Ժամանակին, արաբական որոշ երկրներ այցելելիս, սահմանում մուտքի արտոնագրի դիմում գրելիս խուսափում էի մասնագիտությունս նշելուց, փոխարենը գրում էի «ուսուցիչ» կամ «համալսարանի դասախոս»: Դառը փորձառությունը սովորեցրել էր ինձ, որ նման երկրներում լրագրողը համարվում էր լրտես, կամ նման մի բան: Ոչ միայն պետական հիմնարկներում, այլեւ առհասարակ, ընդունակ չէին ըմբռնելու, որ լրագրողը կարող է լինել անկողմնակալ վկա, արդարամիտ ու ճշմարտախոս վկայող: Ու հետաքրքրում, լրտեսում էին նրանց՝ լրագրողներին:**

**Հիմա, 25-30 տարի անց, որպես «բարի» ժամանակներ պետք է ընդունել այդ տարիները: Ինչպես՝ 80-ական թվականները, երբ, օրինակ, «գլխավոր ահաբեկիչ» ճանաչված Յասիր Արաֆաթը, բեյրության իր բունկերում, իսրայելական «Քֆիրների» ռումբերի տակ, զրուցում ու շախմատ էր խաղում օտարերկրյա լրագրողների հետ: Հիմա, որպես «բարի» ժամանակ պետք է ընդունել նույնիսկ Բեն Լադենի մոլեգնության տարիները, երբ նա՝ «Աշխարհի թիվ 1 ահաբեկիչը», կարող էր, օրինակ, երկու անգամ ընդունել Ռոբերտ Ֆիսկի նման լրագրողին ու երկար զրուցել եւ հարցազրույց տալ նրան: Դրանով, համենայնդեպս, արժեւորվում էր լրագրողի ու լրագրության դերը: Հիմա լրագրողներին առեւանգում են ու կտտանքների ենթարկում, պատանդ պահում փողի կամ փոխանակման համար, օգտագործում որպես քաղաքական մանրադրամ եւ քաղաքականության զոհ: Հիմա պարզապես գլխատում են լրագրողներին, նույնիկ անգլիացի ջիհադիստի ձեռքով, եւ ամենայն մանրամասնությամբ այդ վայրագ գործողությունը ցուցադրում սոցիալական ցանցերում որպես փոխվրեժ հյուսիսային Իրաքում ամերիկյան ռազմօդանավերի ռմբակոծման դեմ եւ որպես նախազգուշացում՝ ռմբակոծությունները չդադարեցնելու պարագայում պատանդ պահվող մյուս 19 լրագրողներին եւս գլխատելու սպառնալիքով...**

**Ամերիկացի Ջեյմս Ֆոլին ազատ լրագրող էր, որի պատրաստած նյութերն ու լուսանկարները հրապարակվում էին Global Post-ում: Եվ ինչպես նրա մայրն է վկայում, նա գնացել էր Սիրիա՝ «հասարակ ժողովրդի տառապանքները նկարագրելու»: Գործընկերների բնորոշմամբ նա փորձառու, հավասարակշռված, ճշմարտախոս պրոֆեսիոնալ էր: 2012-ին էին ջիհադիստները նրան առեւանգել հյուսիս-արեւմտյան Սիրիայում մասնագիտական պարսկանությունը կատարելիս: Այսինքն հենց այն վայրում, Ռաֆայում, որը Թուրքիայի, Քաթարի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի ու Մ. Նահանգների ֆինանսավորմամբ ու զինամբ ծայրահեղ ու մոլեռանդ իսլամների որջն էր եւ է: Այնքան ժամանակ, որ այդ ջիհադիստները եւ վերջերս նրանց հետ միավորված «Ջաբհաս ան Նուսրայի» մարդիկ կռվում էին նախագահ Ասադի վարչակարգի դեմ, վերոհիշյալ երկրների համար նրանք «լավ» մոլեռանդներ էին, «ազատատենչ մարտիկներ», որոնց թույլատրված էր սիրիական բանակի գերի ընկած հրամանատարի սիրտը ողջողջ հանել կրծքից ու հռհռալ: Նրանց թույլատրված էր առեւանգել արեւմտյան լրագրողներին, այդ թվում՝ ամերիկացի Ջեյմս Ֆոլիին, ու ամենօրյա կտտանքների ենթարկել նրան՝ եվրոպացի ջիհադիստների իսկ ձեռքով, որոնք այժմ 3000-ից ավել են հաշվվում Սիրիայում եւ Իրաքում: Բայց հիմա, երբ ISIS-ականները սրընթաց արշավում են Իրաքով մեկ, մոռթոտում խաղաղ բնակիչներին, ըստ երեւույթին անցել են նախագծված բոլոր կարմիր գծերը: Ուրեմն ժամն է հարվածելու նրանց:**

**Այնինչ ռազմօդանավերով չես կարող արմատախիլ անել մոլեռանդությունը, մարդատյացությունը, վայրագությունն ու գազանությունը, որոնց առաջին զոհերը խաղաղ բնակիչներն են, եւ նրանց տառապանքը նկարագրող լրագրողները՝ նույնպես: Դրանք արմատախիլ անելու համար պետք է համակարգված ու միաժամանակյա արդարամիտ աշխատանք՝ կարգավորելու արյունալի հակամարտությունները Գազայում, Սիրիայում, Իրաքում, Լիբիայում եւ ողջ տարածաշրջանում:**

**Այլապես կշարունակվի նաեւ լրագրողների գլխատումը: Լրագրությանը՝ նույնպես:**

Հ. ԱՎԵՏԻՔՅԱՆ

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

## Նոր սառը պատերազմը խոչընդոտում է Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորմանը

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը իրեն չի պահում որպես մի երկրի առաջնորդի, որը պարտվել է Հայաստանի եւ Ղարաբաղի՝ մեր պատմական Արցախի դեմ իր իսկ սանձազերծած պատերազմում: Ճիշտ հակառակը, նա սպառնում է հայերին մի նոր պատերազմով, հույսը դնելով իր երկրի զինված ուժերի ընդլայնման վրա: Նրա ակնարկներից մի քանիսը պարզապես այնքան մոլեգին են, որ պատերազմ հայտարարելուն են հավասարազոր:

Վերջերս Աղդամի մոտերքում գտնվող մի զինվորական զորամաս այցելության ժամանակ Ալիեւը իր զինվորներին ոգեւորեց ռազմատենչ հայտարարություններով, հույս ունենալով, որ իր սպառնալիքները լսելի կդառնան նաեւ հարեւան Հայաստանում, որտեղ ժողովուրդը խուճապի կմատնվի: Նա մասնավորապես նշեց. **«Այսօր Հայաստանի զինվորական խունտան, ֆաշիստ ղեկավարները երկիրն առաջնորդում են դեպի անդունդ: Նրանք գրավել են մեր հողերը, բայց միաժամանակ գրավել են նաեւ ամբողջ Հայաստանը: Հայ ժողովուրդը պետք է ձերբազատվի այդ կրիմինալ եւ կոռումպացված առաջնորդներից: Այլապես հսկայական աղետներ են սպասվում Հայաստանում: Եթե հայերի ֆաշիստական պետությունը վերջ չդնի իր կեղտոտ գործերին, ապա հայկական պետության գոյությունն անգամ դրվելու է հարցականի տակ»:**

Այս խոսքերը Ալիեւը կարծես փոխ է առել Հայաստանի ընդդիմադիր որոշ առաջնորդների հռետորական հայտարարություններից կամ էլ նրանց արտասահմանյան խնամակալների բառապաշարից: Երբ թշնամին դռանդ առաջ է, նման հայտարարություններ որեւէ հայի կողմից հայրենասիրական չեն կարող բնութագրվել:

⇨2

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## Կկարողանա՞ն օգտվել ռուսական շուկայի քաքից հայ արտահանողները

«Արգելքների պատերազմը» Արեւմուտքի եւ Ռուսաստանի միջեւ շարունակվում է: Ռուսաստանի պատասխանը Արեւմուտքին՝ ԱՄՆ-ից, Կանադայից եւ ԵՄ երկրներից մի քանի տասնյակ սննդատեսակների ներմուծման արգելքի տեսքով, որոշակի հնարավորություններ է ստեղծել հայկական արտահանողների համար: Հայտնի է, որ Հայաստանից Ռուսաստան արտահանվող ապրանքների մեջ շատ են այն ապրանքները, որոնք արգելվել են ներմուծել վերոնշյալ երկրներից: Մասնավորապես, էկոնոմիկայի նախարար Կարեն Ճշմարիտյանի տեղեկացմամբ, 57 անուն ապրանքներից, որոնց ներմուծումը Ռուսաստան արգելվել է, 31-ը Հայաստանն արտահանում է հատկապես Ռուսաստան: Դրանք գյուղատնտեսական եւ սննդարդյունաբերական ապրանքներն են՝ գյուղմթերքներ՝ թարմ, չորացրած, պահածոյացված, հյութեր, կաթամթերք, ձկնամթերք եւ այլն: Հայ արտահանողների համար չասենք, բացառիկ, բայց լավ հնարավորություն է ստեղծվել ընդլայնել իրենց արտադրանքի արտահանման եւ իրացման ծավալները Ռուսաստանում:

Բնական է, որ Հայաստանն ամբողջությամբ չի կարողանա լրացնել Ռուսաստանի շուկայում առաջացող բացը, քանի որ խոսքը մոտ 12 մլրդ եվրո արժողությամբ ապրանքների մասին է: Ռուսական իշխանությունների տեղեկացմամբ, ռուսաստանյան արտադրողները, Հարավային Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի երկրների եւ նախկին ԽՍՀՄ հանրապետությունների արտահանողները համատեղ կլրացնեն արգելքի տակ հայտնված արեւմտյան ապրանքների մատակարարումը: Ինչ մնում է Հայաստանին, ապա մեր հնարավորությունները դիտարկելու համար նախ անդրադառնանք դեպի Ռուսաստան մեր արտահանման ցուցանիշներին:

Հայաստանից Ռուսաստան 2013-ին **արտահանվել է 334 մլն դոլարի արտադրանք** կամ մեր ամբողջ արտահանման 22,6 տոկոսը: **2014-ի հունվար-հունիսին այս ցուցանիշը կազմել է 134 մլն դոլար,** նախորդ տարվա 6 ամիսների նկատմամբ նվազելով 6,4 տոկոսով: Այդուհանդերձ, **մեր ամբողջ արտահանման 19 տոկոսը դեպի Ռուսաստան է եւ այս երկիրը մնում է մեր արտահանման ամենամեծ շուկան:** Ռուսաստանի կողմից ներմուծման արգելքի տակ հայտնված 31 ապրանքների մասով Հայաստանի արտահանման ցուցանիշը, դարձյալ Կարեն Ճշմարիտյանի հավաստիացմամբ, կազմում է մոտ 67 մլն դոլար: Որքանո՞վ հնարավոր կլինի ավելացնել այս ցուցանիշը առաջացած հնարավորության արդյունքում, դժվար է ասել: Ակնհայտ է, որ ռուսական շուկայում մեր ապրանքների ծավալները մեծ չեն եւ ընդլայնման անսպառ հնարավորություններ կան:

⇨7

**Դերսիմ. առեղծվածային աշխարհ**

էջ 4

**Խաղաղասերները, Ադրբեջանն ու մենք**

էջ 5

Արմեն Ջարյան-100

**Ինչ նախագծեց եւ ինչ եղավ**

էջ Ա,Գ

AZG NEW SHABAT.QXD 21/08/2014 22:44 Page 2



# Նոր սառը պատերազմը խոչընդոտում է ղարաբաղյան հիմնահարցի կարգավորմանը

⇨1 Բայց Ալիեւն, անշուշտ, ունի իր հռետորական բառապաշարը եւ բոլորովին կարիք չունի որեւէ մեկից փոխ առնելու: Նա գոռոզաբար հայտարարում է. «Ադրբեջանը արտադրում է ժամանակակից զենքեր եւ հանդերձանք: Միաժամանակ այն սպառազինությունը, սարքավորումները, զենքերն ու ռազմամթերքը, որ մենք գնում ենք օտար աղբյուրներից, ամենաբարձր մակարդակին են համապատասխանում: Մենք ձեռք ենք բերել օդային պաշտպանության ամենաարդիական սարքավորումները: Մեր բանակն ունի հզորագույն հրետանին: Բարձրագույն ճշգրտության հրթիռային համակարգերը, մարտական եւ ուղեւորատար ուղղաթիռները, մարտական ինքնաթիռները, զրահապատ մեքենաներն ու տանկերը կազմում են ադրբեջանական բանակի մարտական հնարավորությունների գրավականը: Այսօր ադրբեջանական բանակը ի զորու է կործանելու Լեռնային Ղարաբաղում գտնվող որեւէ օբյեկտ»: Հիշեցնենք, որ ազերի նախկին նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը նմանատիպ հայտարարություններով էր հանդես եկել ղարաբաղյան պատերազմի օրերին, մինչդեռ զինադադարի ժամանակ ազերի ծանր հրետանու մեծ մասը գտնվում էր հայկական զորքերի ձեռքերում:

Բայց Ալիեւը չի բավարարվում վերոնշյալով: Նա սպառնում է նվաճել «Էրիվանի խանությունը», ներառյալ Զանգեզուրը, եւ ի վերջո ազերի դրոշը բարձրացնել «գրավյալ բոլոր տարածքների՝ ներառյալ Շուշայի եւ Խանքենդի վրա»:

«Outlook.com» կայքում տեղադրած իր հոդվածում Մարկ Դիսզենը, որ քննադատում է Մ. Նահանգների ներկայացուցիչ Ջեյմս Ուոլլիի Ղարաբաղյան հակամարտությունը լուծելու միակողմանի ծրագիրը, հետեւյալ կերպ է բնութագրում Ալիեւի վերոնշյալ հայտարարությունները. **«Դրանք ոչ թե պարտված կողմի հաշտության ձգտող, այլ այդ պարտության վրեժը լուծելու հայտարարություններ են»:**

Իրոք, Ադրբեջանի զենքի կուտակումները վերջին տարիներին ահավոր չափերի են հասել: Հայկական զորքերի դեմ պատերազմում պարտություն կրելուց հետո Ադրբեջանը ձեռնամուխ եղավ սպառազինությունների մի մրցավազքի, որպեսզի քայքայեր Հայաստանի տնտեսությունը: Նավթային հարստության իր պաշարներով նա մոլեգնորեն սկսեց սպառազինվել, հատկացնելով 2013-ին այդ նպատակի համար 3.44 միլիարդ դոլար: Ստոկհոլմի խաղաղության հետազոտման միջազգային ինստիտուտի տվյալներով 2004 թվականից այս կողմ 493 տոկոսով ավելացել է նրա պաշտպանության բյուջեն: Համեմատության համար նշենք, որ Հայաստանը, ըստ նույն աղբյուրի տվյալների, 115 տոկոսով է մեծացրել իր պաշտպանության բյուջեն (2004-ի նկատմամբ) տարեկան ծախսելով 427 միլիոն դոլար: Բացի այն, որ Հայաստանի ծախսերն այդ բնագավառում միլիոններով են հաշվվում եւ ոչ թե միլիարդներով, երկիրը չունի նավթի նման կարեւորագույն աղբյուրը, որտեղից ծորացող եկամուտներով հեղեղի իր գանձարանը:

Հիմնականում Իսրայելն ու Ռուսաստանն են սպառազինում Ադրբեջանին: Իսրայելը առանձնապես թշնամանք չի տածում Հայաստանի հանդեպ: Բայց նրա աշխարհաքաղաքական դիրքն ու շահը սիրողում են, որ նա որոշակի մի հենակետ ունենա իրանյան սահմանագծի վրա, հատկապես, որ Ադրբեջանն էլ իր հերթին վիճահարույց խնդիր ունի Թեհրանի հետ կապված Իրանի այսպես կոչված «Հյուսիսային Ազերբայջան» տարածքի հետ: Իսկ ռուսական «Ուրալվագոնզավոդ» կոնցեռնը օրերս հայտարարեց, որ ռազմական սարքավորումների եւ հանդերձանքի մի նոր խմբաքանակ է ուղարկելու Բաքու՝ վերջինիս պատվերով:

Կովկասում լարվածության սաստկացումը չի կարելի դիտել առանձնացված, մեկուսացված վիճակում: Հայաստանն ու Ադրբեջանը առանձին չեն այս խաղում: Կովկասյան լարվածությունները անմիջական հետեւանքն են ուժերի համընդհանուր վերադասավորումների: Չնայած նախագահ Օբաման ժխտեց կտրականապես, որ Ռուսաստանի դեմ ձեռնարկված պատժամիջոցները դուռ են բացում դեպի նոր սառը պատերազմ, Մ. Նահանգների գործողությունները աշխարհի տարբեր վայրերում վկայում են նոր սառը պատերազմի սկզբնավորման մասին եւ պաշտպանություն են գտնում եվրոպական երկրների կողմից: Դրանք միսված են պարփակելու Ռուսաստանին: Խորհրդային կայրության փլուզումից հետո միաբեւեռ աշխարհում Մ. Նահանգները վայելում է գլոբալ հեգեմոնիայի առանձնաշնորհյալ կարգավիճակը եւ բնականաբար չի ցանկանում զիջել իր դիրքերը: Հակառակ Գորբաչովին տված խոստումներին, Արեւմուտքը ընդարձակում է ՆԱՏՕ-ի դաշնակիցների շրջանակը՝ պարփակելով Ռուսաստանին: Իրաքի, Լիբիայի եւ Սիրիայի դեմ սանձազերծած անխոհեմ ներխուժումը համարվում է միջազգային օրենքին համահունչ գործողություն, մինչդեռ Ղրիմի միակցումը Ռուսաստանին՝ միջազգային օրենքի կոպիտ խախտում:

Քսան տարի է, ինչ Ռուսաստանը, Մ. Նահանգները եւ Ֆրանսիան համագործակցում էին ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի շրջանակներում, բայց հանկարծ Մ. Նահանգները դուրս գալով դրա շրջանակներից, միակողմանիորեն հայտարարեց Ղարաբաղյան հիմնահարցի լուծման իր քաղաքական դիրքորոշումը: Այդ քաղաքականությունը հնչեց նախ ներկայացուցիչ Ուոլլիի, ապա նաեւ Հայաստանում Մ. Նահանգների դեսպան Ջոն Հեֆֆեռնի բերանից: Նոր քաղաքականության գլխավոր տարրը խաղաղարար ուժերի ներկայությունն է ղարաբաղյան սահմանի երկայնքով, եւ դժվար չէ կռահել, թե ինչ է թաքնված դրա հետեւում: Քաղաքական մեկնաբանների եզրակացությունն այն է, որ Մ. Նահանգները ցանկանում է իր դիրքերը ամրացնել Կովկասում՝ իրանյան սահմանի երկայնքով, միաժամանակ հնարավորություն ընձեռելով պարփակելու Ռուսաստանին:

Հայաստանը մերժեց խաղաղարար ուժերի տեղակայման առաջարկը, նույնիսկ այն ժամանակ, երբ Ռուսաստանը, որպես դաշնակից, պատրաստակամություն հայտնեց ուղարկելու իր խաղաղարար ուժերին: Մերժեց, որովհետեւ ընդունելու դեպքում կորցնելու էր բանակցություններին ինքնուրույն մասնակցելու իր իրավունքը:

Վերջին շրջանում հնչած ամենատարածված հարցն այն է, թե ո՞վ է հաղթելու պատերազմում, եթե նման իրավիճակ ստեղծվի: Շատ դժվար է կանխորոշել ելքը: Դա կախված է լինելու ուժերի վերամիավորումներից: Թուրքիան մասնակցելո՞ւ է, Ռուսաստանը միջամտելո՞ւ է: Վաշինգտոնում մեծ հակվածություն կա միջամտելու (ինտերվենցիայի) հատկապես այն պատճառով, որ դրա հետեւանքում էլ ավելի կսեղմվի Ռուսաստանի պարփակման օղակը:

Մի բան պարզ է: Ռուսաստանը չի ցանկանում Արեւմուտքին հանձնել Ադրբեջանին: Ոչ էլ առավել օտարացնելու Հայաստանին: Այնպես որ, լավագույն լուծումը Ռուսաստանի համար «ստատուս քվոյի» պահպանումն է: Եվ կարծես դա նաեւ երկար սպասված Սոչիի գագաթնաժողովի եզրահանգումն է: Չմոռանանք, որ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդն էլ հանդես էր եկել նման առաջարկով:

Պուտինը օգտվեց կողմերին մերձեցնելու առաջին իսկ հնարավորությունից: Ալիեւի մախմալիստական կեցվածքը փոխվեց: Փոխարենը նա օգտագործեց ՄԱԿ-ի խաղաթուղթը եւ մեղադրեց Հայաստանին այդ կազմակերպության որոշումները անտեսելու մեջ: Սրան Հայաստանի նախագահը հարցրեց, թե այդ որոշումներից ո՞ր մեկն է կատարել Ադրբեջանը: Կողմերից ոչ մեկը չզիջեց, եւ Պուտինը կարծես հասավ իր նպատակին: Գագաթաժողովի ավարտին Ռուսաստանի արտգործնախարար **Սերգեյ Լավրովն** ի մի բերեց արդյունքները՝ ասելով. «**Հանդիպումը կարեւոր էր: Նախագահները հաստատեցին ԵԱՀԿ-համանախագահների սկզբունքներին հավատարիմ մնալու իրենց պատրաստակամությունը եւ դա նշանակում է խաղաղ լուծում գտնելու անհրաժեշտությունը, որտեղ հարգվեն ե՛ւ տարածքային ամբողջականության, ե՛ւ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքները, ինչպես նաեւ հակամարտության միայն խաղաղ եղանակներով լուծման սկզբունքը**»:

Ի դեպ «տարածքային ամբողջականության» հասկացությունը տարբեր նշանակություն ունի կողմերից յուրաքանչյուրի համար: Սա նշանակում է, որ մենք դոփում ենք տեղում: Լարվածությունները կարող են թուլանալ որոշ ժամանակով, մինչեւ միջսահմանային կրակոցները դարձյալ հնչեն:

Կարելի՞ է ասել, որ Ղարաբաղյան հակամարտությունը «զսպված» է: Իհարկե ոչ: Այն պարզապես հետաձգված է անորոշ ժամանակով:

Հաշվի առնելով Ադրբեջանի թշնամական դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ, դժվար է բացատրել (մի կողմ թողնենք արդարացնելը) Վլադիմիր Պուտինի քաղաքականությունը՝ զինելու Ադրբեջանին: Վերջերս ՄԱԿ-ում Ղրիմի հարցի վերաբերյալ Ռուսաստանին մեղադրող քվեարկության ժամանակ, Ադրբեջանը Ամերիկային միանալով քվեարկեց Ռուսաստանի դեմ: Ադրբեջանը նաեւ 45 միլիարդ դոլարի արժողությամբ էներգետիկ պայմանագիր է կնքել «Բրիտիշ Փեթրոլիումի» հետ նավթ եւ գազ մատակարարելու Եվրոպային՝ շրջանցելով ռուսաստանյան տարածքները:

Ենթադրվում է, որ Մոսկվան դեռեւս հույս ունի հրապուրելու Ադրբեջանին, որ միանա իր Մաքսային միությանը: Հավանաբար փայփայում է նաեւ իր էներգետիկ պայմանագրերի հեռանկարները Բաքվի հետ:

Անցյալ շաբաթ Ռուսաստանի կառավարությունը հավանություն տվեց Հայաստանի անդամակցությանը Մաքսային միությանը, չնայած դժվար է լինելու պատկերացնել երկու թշնամիների գոյությունը ռուսական նույն ճամբարում:

Շատերն են վրդովված վերջին շրջանում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանային միջադեպերի աճխուժացման կապակցությամբ: Ամեն անգամ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպում է ծրագրվում, Բաքուն սաստկացնում է լարվածությունը՝ հույս ունենալով զիջումներ կորզել Հայաստանից բանակցությունների ընթացքում: Այս անգամ միջադեպերը հավանական պատերազմի սկիզբն էին կարծես ազդարարում: Ադրբեջանցիները զգալի կորուստներ կրելով նահանջեցին: Հայերի կորուստները համեմատաբար փոքր էին, բայց պատերազմական իրավիճակներում վիճակագրական տվյալները միշտ վիճելի են մնում:

Հայաստանն իր հերթին զարկ տվեց իր ռազմական հռետորությանը: Կառավարությանը զեկուցելով սահմանային իրավիճակի մասին, պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանը** եզրակացրեց իր խոսքն՝ ասելով, որ նրանք (ազերիները) իրենց իսկ ստերի թակարդն են ընկել: «**Տարիներ շարունակ նրանք իրենց ժողովրդին հավաստիացրել են, որ հզոր բանակ ունեն, որ մշտապես վերազինվում են եւ անպարտելի են: Այս կապակցությամբ պետք է ասեմ, որ թուրքը թուրք է մնում, եւ մենք գործելու ենք այն օրենքներով, որ իրենք են գործում մեր դեմ**», ասաց նա: Նախագահ **Սերժ Սարգսյանի** ակնարկները նույնքան անողոք էին: Անդրադառնալով Ալիեւի ռազմատենչ տոնին, նա ասաց. «**Մենք ունենք բալիստիկ հրթիռներ, որոնց գործողության շառավիղը 300 կմ-ից ավելի է, եւ որոնք շատ կարճ ժամանակում ցանկացած ծաղկուն բնակավայր կարող են վերածել այնպիսի ավերակների, ինչպիսին հիմա Աղդամի ավերակներն են: Ընտրության հարց է: Եթե այդ մարդիկ «իրենց գլխից ձեռք են քաշել», եթե նրանք որոշել են, որ պետք է գնալ ռազմական լայնածավալ գործողությունների եւ, նույնիսկ, կարող են Հայաստանի բնակավայրերը, որոնք սահմանամերձ չեն, ընտրել որպես թիրախ, ապա թող իրենք իրենց պատասխանատվության մասին մտածեն**»:

Դեպքերը, ԱՄՆ
Թարգմ. Հ.Ծ.

AZG NEW SHABAT.QXD 21/08/2014 22:44 Page 3



# Թե ինչպես Ուկրաինան ոգեւորեց Ալիեւին

## *Ադրբեջանի նախագահը Սոչիի հանդիպմանը գնաց գլխիկոր, բայց դրանից դաս քաղելու կարողություն դժվար ունենա*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սահմանային եւ շփման գծի երկայնքով տեղի ունեցած օգոստոսյան միջադեպերի առաջին դիվերսիոն քայլերը հուլիսի վերջից սկիզբ դրեցին Ադրբեջանի ճնշված ամբիցիաների իրագործման մի փորձի, որին հայկական կողմերի արձագանքն էր, որ ամենից առաջ փոխեց իրավիճակը:

Դեռեւս հուլիսին ակտիվ խոսակցություններ ու որոշակի նախապատրաստական աշխատանքներ էին սկսվել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման կազմակերպման ուղղությամբ, որ ավելի հավանական էր համարվում գլուխ բերել սեպտեմբերին՝ Նյու Յորքում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նիստի շրջանակներում: Սակայն հուլիսի 31-ի ադրբեջանական դիվերսիան ու դրան հաջորդած իրադարձությունները Սարգսյան-Ալիեւ հանդիպման համար այլ ամսաթիվ մատնանշեցին եւ ավելի մոտիկ հեռավորության վրա՝ Սոչիում, օգոստոսի 10-ին:

Ադրբեջանական կողմի դիվերսիոն փորձերը հետաքրքրական զուգադիպությամբ ավելի հաճախ համընկնում են հենց Ադրբեջանի ներսում լուրջ խնդիրների առկայության հետ, որոնցից ուշադրություն շեղելու, ցավոք, ամենափորձված մեթոդը ղարաբաղյան ուղղությամբ ինչ-որ «նորությունների» առկայությունն է: Հուլիսի 31-ի առաջին դիվերսիոն քայլին ու դրան հաջորդած անհաջող փորձերին զուգահեռ Ադրբեջանում տեղի էին ունենում իրադարձություններ, որոնց առնչությամբ մտահոգություն ու դատապարտման հայտարարություններ են արվել ամենաբարձր մակարդակներով՝ միջազգային պետական եւ իրավապաշտպան կազմակերպությունների կողմից:

Խոսքը ձերբակալությունների, բռնությունների ու ճնշումների այն շարքի մասին է, որ հուլիսի 30-ից սկսած իրականացվում են Ադրբեջանում: Մինչեւ Սոչիում տեղի ունենալիք հանդիպումն Ադրեջանում մարդու իրավունքների խախտումների դեմ պայքարող մի շարք գործիչներ, որոնց անունները Ադրբեջանից դուրս էլ պակաս հայտնի չեն, ձերբակալվեցին. իրավապաշտպան Լեյլա Յունուս, նրա ամուսին Արիֆ Յունուս, Մարդու իրավունքների ակումբի ղեկավար Ռասուլ Ջաֆարով ու փաստաբան Ինտիգամ Ալիեւ: Եվ սա այն պարագայում, երբ Ադրբեջանը նախագահում է Եվրոպայի խորհրդում՝ մարդու իրավունքների պաշտպանությունը գերակայություն հռչակած այդ կառույցում:

Ավելին, ձերբակալություններն ու բռնություններն այսքանով չեն ավարտվել, դրանք դեռ շարունակվում են այն բոլոր ակտիվիստների նկատմամբ, որոնք երբեւէ փորձել են բարձրաձայնել Ադրբեջանում մարդու իրավունքների առնչությամբ առկա խնդիրների մասին, իսկ վերջին շրջանում՝ նաեւ ներգրավված են հայ-ադրբեջանական որեւէ տեսակի երկխոսության մեջ:

Պատերազմ քարոզող ու դրա հավանականությունը սադրանքներով եւ ռազմատենչ հռետորաբանությամբ աշխույժ պահող Ադրբեջանի իշխանությունների համար ներքին այս իրավիճակի ֆոնին հասարակության ուշադրությունը շեղելու անհրաժեշտությունը, ինչպես նաեւ զենքի հսկայական պաշարների կուտակմամբ ինքնագնահատականի անհիմն աճ ունեցած Ալիեւ կտրտերի որոշումները դարձան սահմանային ու շփման գծի լարվածության պատճառ: Ամեն դեպքում, Սոչիի հանդիպմանն ընդառաջ՝ ինչ-որ հույսեր կային, թե, նախ, լարվածությունը կթուլանա, իրավիճակը կմեղմվի, ապա նաեւ դադարի մեջ հայտնված բանակցությունները կշարունակվեն:

Սակայն եթե առաջինը կորցնում է կարեւորությունը, ապա երկրորդը ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում: Հենց ուկրաինական ճգնաժամի ու զարգացումների ֆոնին է, որ Հայաստանի հետ ընթարկելիքը Պուտինի համար կարող էր պակաս կարեւոր լինել, քան Ալիեւի հետ հնարավոր Ադրբեջան-Ղազախստան միության ու այլ սցենարների ընթարկումը:

Իսկ եթե հաշվի առնենք նաեւ, որ սահմանային ու շփման գծում լարվածությունն արդեն իսկ որոշակիորեն մեղմվելու միտում ուներ ադրբեջանական սադրանքներին ու արկածախնդրությանը հայկական կողմի կոշտ արձագանքի արդյունքում, ապա Սոչիի հանդիպումն, ըստ էության, միայն թարմացում էր բանակցությունների համար կազմակերպվող հանդիպումների շարքում, ինչպես նաեւ լրացուցիչ մի ապացույց, որ Ալիեւը պատերազմի հավանականությունը միշտ փորձում է վաճառել միջազգային հանրությանը, սակայն այդպես էլ չի կարողանում վերսկսել պատերազմ՝ քաջ գիտակցելով այդպիսի քայլի իրական ելքերը:

Սոչիի հանդիպման ավարտին ԴԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը հիշեցրել է մի շատ կարեւոր հանգամանքի մասին, որը թերեւս հիշեցման կարգով պետք է հասցեագրվեր Ալիեւ կրտսերին, այլ ոչ ընդհանրական լսարանին: Խոսքը միջադեպերի հետաքննության անցկացմանն է վերաբերում, որի իրականացման դեպքում իրական ու գործնական հիմք կստեղծվեր սահմանին ու շփման գծի երկայնքով հրադադարի ռեժիմի խախտումները կանխելու համար: Սրան Ադրբեջանը չի համաձայնում, ու թեեւ Լավրովի տեղեկացմամբ՝ արտգործնախարարներին հանձնարարվել է աշխատել նաեւ այս ուղղությամբ, դժվար թե արդյունք լինի, հատկապես որ նույն ուղղությամբ այսպես թե այնպես հանձնարարվել է աշխատել նաեւ մինչեւ օրս:

### Ով ինչ ձեռք բերեց Սոչիում

Հանդիպմանը հաջորդած օրերից սկսած շփման գծում լարվածությունը սկսեց մեղմվել, ինչը կարելի է համարել հանդիպման արդյունքներից մեկը: Սակայն ակնհայտ է, որ մինչեւ հանդիպումն էլ լարվածությունը մարելու միտում կար: Անկախ բոլոր տեսակի մեթենայություններն ու ավանտյուրաները, դժվար թե յուրաքանչյուր դիվերսիայից հետո քիչ թե շատ դատող մարդը ներկա դրությամբ մտածի շարունակական դարձնել այդ իրավիճակը, այն էլ Ադրբեջանի պարագայում, երբ ձախողումները հաջորդեցին միմյանց՝ ապացույցներով, որ միլիարդավոր դոլարների սպառազինությունը եթե առաջինը կորցնում է կարեւորությունը, ապա երկրորդը ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում: Հենց ուկրաինական ճգնաժամի ու զարգացումների ֆոնին է, որ Հայաստանի հետ ընթարկելիքը Պուտինի համար կարող էր պակաս կարեւոր լինել, քան Ալիեւի հետ հնարավոր Ադրբեջան-Ղազախստան միության ու այլ սցենարների ընթարկումը:

Իսկ եթե հաշվի առնենք նաեւ, որ սահմանային ու շփման գծում լարվածությունն արդեն իսկ որոշակիորեն մեղմվելու միտում ուներ ադրբեջանական սադրանքներին ու արկածախնդրությանը հայկական կողմի կոշտ արձագանքի արդյունքում, ապա Սոչիի հանդիպումն, ըստ էության, միայն թարմացում էր բանակցությունների համար կազմակերպվող հանդիպումների շարքում, ինչպես նաեւ լրացուցիչ մի ապացույց, որ Ալիեւը պատերազմի հավանականությունը միշտ փորձում է վաճառել միջազգային հանրությանը, սակայն այդպես էլ չի կարողանում վերսկսել պատերազմ՝ քաջ գիտակցելով այդպիսի քայլի իրական ելքերը:

Սոչիի հանդիպման ավարտին ԴԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը հիշեցրել է մի շատ կարեւոր հանգամանքի մասին, որը թերեւս հիշեցման կարգով պետք է հասցեագրվեր Ալիեւ կրտսերին, այլ ոչ ընդհանրական լսարանին: Խոսքը միջադեպերի հետաքննության անցկացմանն է վերաբերում, որի իրականացման դեպքում իրական ու գործնական հիմք կստեղծվեր սահմանին ու շփման գծի երկայնքով հրադադարի ռեժիմի խախտումները կանխելու համար: Սրան Ադրբեջանը չի համաձայնում, ու թեեւ Լավրովի տեղեկացմամբ՝ արտգործնախարարներին հանձնարարվել է աշխատել նաեւ այս ուղղությամբ, դժվար թե արդյունք լինի, հատկապես որ նույն ուղղությամբ այսպես թե այնպես հանձնարարվել է աշխատել նաեւ մինչեւ օրս:

Ու քանի որ գնալով ուժգնանում, ավելի հստակ ու ավելի հաճախակի են դառնում քննադատությունները հակամարտության մեջ ներգրավված կողմերին զենք վաճառելու Ռուսաստանի մոտեցման առնչությամբ, պատահական չէր, որ Պուտինը հանդիպմանը շեշտադրեց Հայաստանի ու Ադրբեջանի հետ առանձնահատուկ սերտ հարաբերություններ ունենալու շնորհիվ Ռուսաստանի նախաձեռնությամբ նախագահների հանդիպման կազմակերպման կարեւորությունը՝ անկախ միջազգային ձեւաչափերից, որոնք Պուտինը «հարգում է»:

Սոչիի հանդիպումը Ռուսաստանը կփորձի օգտագործել նաեւ որպես պատժամիջոցներին հակազդեցության հնարավորություն՝ ի ցույց դնելով մեր տարածաշրջանում Ռուսաստանի դեռեւս պահպանվող ազդեցության ու նախաձեռնողականության օրինակ, այն էլ՝գրեթե պատերազմական վիճակում հայտնված երկու երկրների նախագահների հանդիպում, սեղմ ժամկետներում, կազմակերպելու միջոցով: Հասկանալի է, որ Ուկրաինայի հարցում աշխարհն իր դեմ տրամադրած Ռուսաստանի համար Արցախը մի հարց է, որտեղ կարելի է ցուցադրել ռուսաստանյան «խաղաղարար» դիրքորոշումն ու գործելակերպը այնպիսի մի իրավիճակում, երբ գրեթե յուրաքանչյուր օր սահմանին ու շփման գծում տեղի են ունենում դիվերսիաներ, զոհվում են զինվորականներ, սպանվում խաղաղ բնակիչներ, խախտվում են ոչ միայն հրադադարի, այլեւ անգամ ամենադաժան պայմաններում պահպանվող մարդկային ու պատերազմական կանոնները:

Հայաստանի համար օգոստոսի 10-ի հանդիպումը վերահաստատումն էր խաղաղ ճանապարհով խնդրի կարգավորման համատեքստում, միեւնույն ժամանակ, բանակցային գործընթացի շարունակականությանը կողմ լինելու դիրքորոշման հաստատում:

Ադրբեջանի պարագայում նախ ակնհայտ է, որ Ալիեւը դիվերսիաներով փորձում էր ներսում տիրող իրավիճակից ուշադրություն շեղել, ապա նաեւ միջազգային հանրությանը հրամցնել պատերազմի հնարավորությունը՝ որեւէ բան շահելու ակնկալիքով: Եվ եթե հաշվի առնենք, որ Ռուսաստանի հետ Արեւմուտքի էներգետիկ պատերազմի արդյունքում Ադրբեջանը իրեն նոր հնարավորություններից օգտվողի դերում է պատկերացնում, կարելի է ենթադրել, որ Ադրբեջանի նախագահի մտքով երբեմն անցնում է ռազմական գործողություններով ինչ-որ բան փոփոխելու սցենարը՝ Արեւմուտքի համար էներգետիկ իր կարեւորության հաշվին:

Ստացվում է, որ Սոչիի հանդիպմանը Ալիեւն ավելի շուտ պարտադրված գնաց, քան այն հիմքերի վրա, ինչպիսիք ուզում էր ստեղծել օգոստոսյան լարվածությունը հրահրելու իր նախաձեռնությամբ: Սոչիի հանդիպման շնորհիվ Ալիեւն բոլոր պարագաներում հնարավորություն ունեցավ խոսելու խաղաղ լուծման հնարավորությունից, ինչը դիվերսիաներ կազմակերպողի պարագայում վկայում է նրա պարտվողական դիրքի մասին: Այսինքն՝ շատ պարագաներում անհասցե հայտարարություններն անողներն անգամ շատ լավ գիտակցում են, թե ում եւ ինչ է անհրաժեշտ ասել, հետեւաբար՝ Ալիեւը, որպես նախահարձակ կողմ, Սոչի էր գնացել ավելի շուտ գլխիկոր, քան հոխորտացող ու պահանջ ներկայացնող:

Ալիեւը պարտվեց ոչ միայն հայկական զինուժի հետ բախումներում, այլեւ ներքին խնդիրների համատեքստում, քանի որ միջազգային հանրության ուշադրությունն ու ճնշումը մեծանում է նրա ուղղությամբ հենց ներքին ձերբակալությունների, ակտիվիստների նկատմամբ բռնությունների առնչությամբ: Բացի այդ, թեեւ տեղի ունեցած իրադարձություններն ամենաբացասական հետեւանքներ ունեցան, բայց կարող են ունենալ նաեւ դրական ազդեցություն՝ ադրբեջանական հասարակության համար ակնհայտ դարձնելով ինչպես սեփական իշխանության ռազմատենչ հռետորաբանության, այնպես էլ ադրբեջանական բանակի մասին հյուսվող լեգենդների սնանկությունը:

Առայժմ Սոչիի հանդիպումից հետո հիմնականը լարվածության թուլացումն է, եւ հեռանկարը, որ աշնանը Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները նորից հնարավոր է հանդիպեն: Իսկ մինչ այդ տարածաշրջան կայցելեն ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, երբ՝ առայժմ հայտնի չէ:

AZG NEW SHABAT.QXD 21/08/2014 22:44 Page 4



ՆԱԻՐ ՅԱՆ

# Դերսիմ. առեղծվածային աշխարհ

## *Ճակատագրակից ժողովուրդ, հայկական շերտեր*

1960-ականներին դերսիմահայերը կարծում էին, թե իրենք հայոց ցեղասպանությունից փրկված աշխարհի երեսին ապրող միակ հայերն են: Այս մտայնությունը հիմնավոր պատճառ ուներ: Բանն այն է, որ թուրքերը Դերսիմը կտրել էին արտաքին աշխարհից. տեղեկատվության անհասանելիությունն ու վերահսկողությունը թուրքերի կողմից Դերսիմը բռի մեջ պահելու եւ ենթարկեցնելու նպատակ էր հետապնդում: Թուրքական իշխանությունները պարբերաբար իսլամ են պարտադրել ու պարտադրում դրսեսիմցիներին: Դերսիմն ամեն առավոտ արթնանում է մոլլայի ձայնից, որ բոլորին կանչում՝ աղոթելու: Բայց դերսիմցիներն անհաղորդ են այդ հրավերին. նրանք միայն առերես, սեփական կյանքը չվտանգելու համար են ընդունում սունnի դավանանքը, իսկ իրականում ալեւի եղել են ու ալեւի էլ մնում են: Այդ փաստը հունից հանում է թուրքերին: Ինչքան էլ նրանք ջանում են Եվրոպայի աչքին թոզ փչել, թե իբր հարգում են իրենց երկրում ապրող այլ ազգերի հավատքը, բայց ազգայնամոլների ձեռքով հալածում են այլադավաններին՝ իրենց ձեւակերպմամբ՝ հավատուրացներին: Ալեւիներն, ի տարբերություն թուրքերի, խոստովանում են, որ Դերսիմն իրենց հայրենիքը չէ, որ իրենք իրանական ժողովուրդ են ու այստեղ են եկել 10-11-րդ դարերում: Դերսիմում հայկական հնագույն կոթողներ կան. ալեւիները մզկիթները թողած՝ այդ ավերակ եկեղեցիներում են մոմ վառում ու աղոթում: Նրանք մերժում են թուրքական ամեն ինչ՝ լինի կրոն, լեզու, թե անգամ խոհանոց: Եթե սրճարանում սուրճ պատվիրեք ու մատուցողին կողմնորոշելու համար շեշտեք, որ սեւ՝ թուրքական կոչվող սուրճ եք ուզում, նա դուրս կհարվիրի ձեզ սրճարանից՝ ասելով, որ դա թուրքական սուրճ չէ, եւ իրենք առհասարակ թուրքական ոչինչ չունեն:

Ալեւիների մշակույթը, պատմությունը, կենցաղն ուսումնասիրված չեն. մատների վրա կարելի է հաշվել այն գիտնականներին, որոնք երբեւէ հետաքրքրվել են ալեւիներով: Ալեւիզմը բազմաստվածության, բնապաշտության է նման. ալեւիները ծառի, արեւի, ջրի պաշտամունք ունեն: Նրանց սուրբ գետը Մնձուրին է (արժե նորից հիշել հրաշալի գրող Հակոբ Մնձուրու հրաշք պատմվածքները այդ վայրերի բնության ու ժողովրդի մասին: Խմբ.), որին անվանում են Անահիտի ջրեր: Դերսիմցիները թույլ չեն տա լվացվելուց ու ջուր խմելուց բացի, ասենք, լողալ այդ գետում: Մնձուրի գետում են նրանք երդվում, մկրտվում, ամուսնության ու բարեկամության ուխտ անում: Դերսիմցիները լեռնցիներին հատուկ կուռ ու անխախտ ավանդույթներ ունեն:

Դերսիմում 1915-ին թուրքերը ցեղասպանություն չեն իրականացրել: Անառիկ ամրոցի է նման Դերսիմը՝ շրջապատված բարձրաբերձ լեռներով: Թուրքերը ժամանակ չեն վատնել՝ բարձրանալու լեռների ծերպերն ու կոստրելու տեղաբնակներին: Արեւմտյան Հայաստանի հայաբնակ մյուս բնակավայրերն ավելի դյուրահաս են եղել. Դերսիմը նրանք թողել են հետագայի համար: Դերսիմում ապրող զազաներն ու քրդերը նույնպես չեն մասնակցել հայկական կոտորածներին: Ավելին, իրենք էլ են շուտով յաթաղանի բաժին դարձել:

Թուրքերը Դերսիմին ասում են Թունջելի. «թունջն» այն օրերացիան է, որը թուրքերը ձեռնարկել են՝ Դերսիմում ցեղասպանություն իրականացնելու համար: Աթաթուրքի ցեղասպան վերջին գործողությունն իրագործվել է հենց այստեղ 1938-ին: Այդ ոճրագործությունը դերսիմցիները չեն մոռացել ու ներքին ընդվզումով անընդհատ հիշեցնում են այդ մասին: Անգամ տոնական հանդիսությունների ժամանակ կարելի է տեսնել երիտասարդների՝ ձեռքերին պատատառներ՝ «Դերսիմ-1938» վերտառությամբ: Թուրքերը լավ գիտեն, որ այդ ցեղասպանությունը դեռ չեն մարսել, դրա համար էլ առավոտից երեկո Դերսիմը հսկում են ուղղաթիռներով ու ժանդարմներով: Ժանդարմները Դերսիմում ապրող միակ թուրքերն են: Մշտական հալածանքներն ու վերահսկողությունը ստիպում են դերսիմցիներին արտագաղթել: Միայն արտագաղթածներն են բարձրաձայնում, որ իրենք ալեւի են, ոչ թե սունի-մահմեդականներ: Ստամբուլում ու Թուրքիայի մյուս քաղաքներում ազատ արտահայտվելու հնարավորություն որոշ չափով կա, իսկ Դերսիմում՝ բացարձակ ոչ:

Ամեն տարի՝ ամռանը, Դերսիմում տեղի է ունենում «Մունզուր» մշակութային ու բնապահպանական փառատոնը: Այն պատեհ առիթ է, որպեսզի Թուրքիայի մյուս բնակավայրերից ու Եվրոպայից գոնե ժամանակավորապես հայրենիք վերադառնան դերսիմցիները: Ազգային երգ, պար, խոսք, խոհանոց. «Մունզուրն» իր հարկի տակ է հավաքում դերսիմցիներին, հյուրընկալում նաեւ այլ ազգերի երաժշտական խմբերի:

«Կարին» ավանդական երգի, պարի խումբը երկրորդ անգամ է մասնակցել «Մունզուր» փառատոնին: Դերսիմ մեկնելուն աջակցել է «Մոդուս Վիվենդի» կենտրոնը: Նման ճամփորդությունները մշակութային համագործակցություն ստեղծելուց բացի, նպատակ ունեն Դերսիմում ծոցված հայերի հայտնաբերել: Առավել համարձակ դերսիմահայերը խոստովանում են իրենց հայկական ծագումն ու անգամ ցանկություն հայտնում որպես հայ քրիստոնյա՝ մկրտվել: Անցյալ տարի, օրինակ, մի դերսիմցի եկել է Հայաստան ու հայ առաքելական եկեղեցում մկրտություն ստացել: Դերսիմցիները հայ հյուրերի ականջին թաքուն շշնջում են. «Եթե Դերսիմում կլինի մեկը, որ կասի, թե ինքը հայկական ծագում չունի, ուրեմն նա սախոս է»: Բայց հենց որ շրջապատում թուրքեր են հայտնվում, նրանք հայտարարում են, որ մահմեդական են, խոսում են թուրքերեն ու թուրքահպատակ են: Ինչքան էլ ըմբոստ ու սեփական պատմության արյունոտ էջերի նկատմամբ ցասումով լցված լինեն, այնուամենայնիվ, դերսիմցիները ներքին կայուն վախ ունեն թուրքերի նկատմամբ, որ արյան հետ հոսում է երակներում ու սերնդեսերունդ փոխանցվում:

Քաղաքագետների կարծիքով՝ մեր երկիրը պետք է Դերսիմի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատի ու պահպանի: Ի դեմս դերսիմցիների՝ մենք ունենք համախոհներ՝ թուրքական իշխանությունների ծայրահեղ իսլամիստական քաղաքականությունը մերժողներ: Եթե մենք դիվանագիտական հարաբերություններ չունենք Թուրքիայի հետ, եւ մեկս մյուսի հանդեպ թշնամանքով ենք լցված, ուրեմն կարելի է այդ երկրում գտնել էթնիկ կամ կրոնական այնպիսի խմբեր, որոնք բարյացակամ են տրամադրված հայերիս հանդեպ: Ջերմ հարաբերություններ ունենալ Դերսիմի հետ, որտեղ ապրում է 17-20 մլն. ալեւի, Հայաստանի շահերից է բխում միայն: Մանավանդ որ Դերսիմն էլ մեզ նման ունի ցեղասպանության ճանաչման խնդիր:

Վերջին տարիներին Հայաստանի ու Դերսիմի միջեւ սկսված հարաբերություններն աշխուժանալու միտում ունեն: Ոչ ոք չգիտե՝ Դերսիմում քանի հայ է ապրում: Էթնիկ, կրոնական, պատմական, մշակութային զարգացումներն ու հասարակական շերտերն ուսումնասիրված, բացահայտված չեն, ուստի դժվար է ասել, թե դերսիմահայերի ազգային ու մշակութային նկարագրից ինչ է մնացել: Դերսիմից վերադարձողները վստահեցնում են, որ դերսիմահայերի երգերի ու պարերի մեջ հայկական պահպանված ու բյուրեղացած շերտեր կան: Ապրելով այլ ազգերի հետ՝ ժամանակի ընթացքում կենդանի, մշակույթի ու ավանդույթների փոխանակում է տեղի ունեցել: Բայց ինչպես դերսիմահայ մամիկներն են շաղիկի տակ թաքուն պահում-պահպանում մեսաղե խաչը, այնպես էլ հայկական ծագումն ու մշակույթն է ծոցված ապրում Դերսիմի լեռներում, ձորերում, ավերակ եկեղեցիներում ու պատմության հեռավոր տարեթվերում:

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ

# Յանուն Աստծոյ...

***«... Նոքա կործանեցին ու թալանեցին առանց վանքերին ու եկեղեցիներին անգամ խնայելու: Այս աւերումներով չբաւականանալով, Ահմեդի զինուորները թագաւորների ու իշխանների գերեզմանները փորեցին եւ նոցա ոսկորները այրեցին: Բռնուած գերիները խումբ-խումբ բաժանուեցան ու դառն տանջանքների ենթարկուեցան, որպէսզի ստիպուին քրիստոնէական հաւատն ուրանալ, անմեղ գիւղացիք ողջ-ողջ մորթազերծ եղան, քահանաների ու կրօնաւորների աչքերը ջերուցած երկաթներով հանուեցան, ազնուականների լեզուն ու մատները կտրուեցան...»***

**1347- ին, 640 տարի առաջ պատահածի մասին է, Կիլիկիոյ վերջին թագաւորի՝ Լեւոն Ե Լուսինեանի օրով, Եգիպտոսի Մեմլուքներու կողմէ Կիլիկիոյ գրաւումի պատմութիւնն է:**

**Նպատակս պատմութեան վերյիշումն ու վերյիշեցումը չէ, այլ զուգահեռ մը տեսնել է անցեալի ու մեր օրերուն պատահածներուն միջեւ:**

**Տասնչորրորդ դարէն մինչեւ քսան, քսանմէկերորդ դար, աշխարհը որքան փոխուեցաւ, յեղաշրջուեցաւ կարելի է ըսել, այնքան զարգացաւ ու յառաջդիմեց, հասաւ մինչեւ կորիզն ատոմի ու զենիթը անջրպետի, սակայն մարդու մէջի նախամարդ-գազանը մնաց անփոփոխ:**

**Մնաց անփոփոխ, ծուարած հոգիին թէ ուղեղին մէկ մութ անկիւնը ու ատենը անգամ մը գլուխ կը ցցէ, կը պատռէ քաղաքակրթութեան բազմաշերտ իր պատեանը ու կը մերկանայ, վերադառնալու համար Քարէ դար, դառնալու համար վայրագ, գազանաբարոյ, արիւնարբու: Եւ այս մերկացումին գլխաւոր պատճառն ու խթանողը յաճախ եղած է կրօնը.**

**Թէեւ խօսքս ծայրայեղական իսլամիստներու մասին է, սակայն յեսադարձ ակնարկ մը ցոյց կու տայ, որ կրօնական պատերազմներով լեցուն եղած է ամբողջ մարդկային պատմութիւնը, եւ կ՚ըսուի թէ այդ պատերազմները աւելի շատ զոհեր խլած են, քան այլ բնոյթի պատերազմներ:**

**Միաստուածութեան վարդապետութիւնը եկաւ միաւորելու տարաբեսակ հաւատալիքներ ունեցող ժողովուրդները, սակայն տարբեր եղան անոր քարոզիչները, որոնք կոչուեցան Մովսէս կամ Յիսուս, Մոհամմէտ կամ այլ:**

**Իւրաքանչիւր ազգ իրեն պատշաճեցուց կրօնը եւ մեկնաբանեց անոր ուսմունքները ըստ իր նկարագրին եւ ըմբռնումներուն:**

**Այսօր զարմանքով կը նայիմ մեր շուրջ տեղի ունեցածներուն: Ինչ կը քարոզուի ու ինչ կը կատարուի գետնի վրայ:**

**Մենք իսլամական երկրի մը մէջ ապրելով՝ հայկական վարժարաններուն մէջ, արաբ-իսլամական պատմութեան դասեր ալ առած ենք, ուր հանդիպած ենք հետեւեալ արտայայտութեան. «Աշխարհը չտեսաւ աւելի գթասիրտ նուաճող մը, քան իսլամը»...**

**Ո՞ւր է այդ «գթասրտութիւնը» այսօր: Այս ինչ սարսափազդու տեսարաններու ականատես կ՚ըլլանք ամէն օր, այս ինչ վայրագութիւն է. եւ այս բոլորը... Յանուն Աստծոյ, Բի՛սմ Ալլահ կրօնի անունով...**

**Հարիւր տարի եւ աւելի ապրեցանք իսլամներու մէջ, յաճախ կողք-կողքի, վայելեցինք անոնց բարութիւնը, ազնուութիւնը, սէրն ու յարգանքը, մեր կրօնական, ազգային, կրթական, մշակութային եւ այլ բոլոր հաստատութիւնները գործեցին անխափան:**

**Ի՞նչ եղաւ յանկարծ, ինչո՞ւ ամէն ինչ գլխիվայր շրջուեցաւ եւ յանուն ինչի՞:**

**Կրօնը ամենազգայուն լարն է հաւատացեալի մը մէջ, այդ լարին հազիւ դպչիս, հակազդեցութիւնն ու հակադարձութիւնը ակնթարթային կ՚ըլլան: Այս տկարութիւնը շատ լաւ ձեւով շահագործուած է ղեկավարներու կողմէ, որոնք բազմահազար հաւատացեալներ ոտքի հանած են մէկ կոչով (խաչակրաց արշաւանքները միեւնոյն պարունակին մէջ չե՞ն իյնար):**

**«Արաբական գարուն» ըսին ու արիւն հոսեցուցին արաբական երկիրներուն մէջ, յատկապէս Սուրիոյ մէջ: Մէկ՝ քաղաքական ոգի տակ- կրօնական «մաքրագործումներ», մէկ՝ կրօնական ոգի տակ- քաղաքական, աշխարհագրական տեղաշարժեր ու «վերադասաւորումներ».**

**Պահ մը ակամայ կը մտածես, որ համայնավարները սխա՞լ ըրին կրօնին կռնակ դարձնելով...**

**«Յանուն Աստծոյ» մարդիկ կը սրահատուին, կը գլխատուին, կը խաչուին, կը ցցահանուին եւ Աստուած...**

**Աստուած կը տեսնէ ու կը զարմանա՞յ...**

**Ո՛չ, Աստուած չի տեսներ, չի զարմանար, չի զայրանար, քանի որ կռնակը դարձուցած մարդկութեան, կը մտածէ նոր «Ջրհեղեղ»ի մը մասին:**

**Երեւան**

AZG NEW SHABAT.QXD 21/08/2014 22:44 Page 5



# Խաղաղասերները, Ադրբեջանն ու մենք

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

ԱՄՆ-ը, իսկ ավելի վաղ Գերմանիան, հրաժարվել են զենք վաճառել Ադրբեջանին: Կոնկրետ ԱՄՆ-ի որոշման հիմնավորումը հետեւյալն է.«Վաշինգտոնը էմբարգո է կիրառում հակամարտությունների մեջ գտնվող երկրներին զենքի վաճառքի վրա»: Նշենք, որ խոսքը վերաբերում է ամերիկյան «Cougar» եւ «HMMWV» տեսակի ռազմական փոխադրամիջոցների որոշակի խմբաքանակի մասին, որոնք Միացյալ Նահանգները դուրս է բերում Աֆղանստանից, ըստ էության՝ ադրբեջանական տարածքով: Ընդ որում Վաշինգտոնն ավելի վաղ հայտարարել է, որ Աֆղանստանից դուրս բերված զինամթերքը վաճառքի կհանվի, բայց եւ՝ «նախապատվությունը կտրվի այն երկրներին, որոնք ակտիվ մասնակցում են խաղաղասիրական գործողություններին»:

Նկատենք, որ ԱՄՆ-ը, փաստորեն, ԼՂ հակամարտությամբ զբաղվող երկրորդ համանախագահող պետությունն է, որը հրաժարվում է Ադրբեջանին զենք վաճառել: Ավելի վաղ Երեւանում Ֆրանսիայի դեսպանը եւս հայտարարել էր, թե «Ֆրանսիայի քաղաքականությունը չէ հակամարտության մեջ մտնող պետություններին զենք վաճառելը»: Փաստորեն, գոնե Մինսկի խմբից Ռուսաստանն այսօր միակ պետությունն է, ով Ադրբեջանի հետ ունի զենք-զինամթերքի վաճառքի մասին պայմանագրեր, իսկ Հայաստանին՝ ըստ երկկողմ բազմաթիվ ռազմավարական պայմանագրերի՝ ապահովում է զենք-զինամթերքով, ավելին՝ պարտավորվածություններ ունի թարմացնելու Հայաստանում տեղակայված ռուսական ռազմաբազայի (որը ՀՀ զինուժի հետ մեկտեղ ապահովվում է Հայաստանի անվտանգությունն ու տարածքային ամբողջականությունը՝ սահմանի ողջ երկայնքով) եւ Հայաստանի զինված ուժերի զինանոցը:

Իրականում ԱՄՆ-ի, Գերմանիայի ու Ֆրանսիայի կողմից Ադրբեջանին զենք չվաճառելու որոշումից Հայաստանում շատ ոգեւորվել պետք չէ: Նախ, որովհետեւ Բաքուն իր ցանկացած զենքը գնելու համար թե՛ բավարար միջոցներ ունի, թե՛ անհրաժեշտ վաճառողներ, ինչպես համոզվեցինք: Բացի սրանից, եթե Վաշինգտոնը, Բեռլինն ու Փարիզը զենք չեն վաճառում հենց «հակամարտության մեջ գտնվող երկրներին», այլ ոչ թե, ասենք՝ «տարածաշրջաններում խաղաղության սպառնացող երկրներին», ապա նրանք զենք չեն վաճառի անեւ Հայաստանին, եթե, իհարկե, մեր երկիրը ցանկանա ու նրան թույլատրեն արեւմտյան զենք գնել:

Հետեւաբար, առնվազն տարակուսելի է Հայաստանում շատերի ոգեւորությունը Ադրբեջանին զենք վաճառելու «արեւմտյան» այս էմբարգոյի առթիվ: Ավելին, ծիծաղելի է անգամ պնդումը, թե այդպիսով ԱՄՆ-ը, նաեւ Ֆրանսիան (այդ թվում Գերմանիան), պաշտպանում են հայկական կողմերի շահերը՝ ԼՂ հակամարտությունում ու դրսեւորում իսկապես խաղաղասերի ու խաղաղության պաշտպանի վարք:

Իրականում, ոչ ոք, այդ թվում ԱՄՆ-ում, Ֆրանսիայում ու Գերմանիայում չի կարող միանշանակ սահմանել «խաղաղասիրական գործողություններ» ասվածը, քանի որ այն, ինչով ակտիվորեն զբաղված են ԱՄՆ-ի գլխավորությամբ ՆԱՏՕ-ի երկրները՝ աշխարհի տարբեր ծայրերում, ամենեւին էլ խաղաղասիրական գործողություններ չեն: Բացի այդ, եթե խաղաղությունը պետք է պաշտպանել զենքով, ապա դա հարատեւ խաղաղություն չէ, առհասարակ խաղաղություն չէ:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին...ապա, աշխարհում այսօր խաղաղասեր երկրներ չկան. Ռուսաստանն ուղղակի չի էլ պնդում, թե ինքը խաղաղասեր է:

# Տանկեր եւ գրիչներ

Երբ հայ-ադրբեջանական սահմանին վերջին օրերի ընթացքում տեղի ունեցան աննախադեպ՝ իրենց հաճախականությամբ ու, թերեւս, մասշտաբով սադրիչ-դիվերսիոն գործողություններ, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը արձակուրդի մեջ էր: Համենայն դեպս, երբ այդ միջադեպերի հետ կապված, իսկ ավելի կոնկրետ՝ ադրբեջանական բանակի մի քանի տասնյակ մարդկային զոհերի հետ առնչությամբ ադրբեջանական լրատվամիջոցներից որոշները դիմել էին նախագահի աշխատակազմ բացատրություն ու պարզաբանում ստանալու ցանկությամբ, այնտեղից ոչ միչ հայտնի Նովրուզ Մամեդովը հայտարարել էր, թե «Նախագահ Իլհամ Ալիեւը անցկացնում է իր կարճատեւ արձակուրդը»:

Պարզ չէ, թե սրանով ի՞նչ էր հասկացնում Ալիեւը: Մյուս կողմից, դա հասկանալն այնքան էլ բարդ չէ. օրինակ՝ արձակուրդում գտնվող գերագույն գլխավոր հրամանատարը չի կարող հրաման տալ, կամ առնվազն ուղղորդել դիվերսիոն գործողություններ, հետեւաբար՝ կա՛մ այդ գործողություններն ամենեւին էլ ադրբեջանական բանակի կողմից չեն իրագործվում, կա՛մ էլ այդ գործողությունների իրականացման հետ Ալիեւը կապ չունի, քանի որ վերջինս այլեւս ի վիճակի չէ զսպել զիլ ադրբեջանցի «ազատամարտիկ-ռեվանշիստներին»՝ հետ բերելու «ադրբեջանական հողը»: Երկու պարագայում էլ Ալիեւի՝ «արձակուրդում գտնվելու» տեղեկատվությունը հստակ մեսիջ էր առաջին հերթին միջազգային հանրությանը:

Բայց խնդիրն այն է, որ այդ մեսիջը անմիջապես տապալվեց Սոչիում կայացած Սարգսյան-Պուտին-Ալիեւ հանդիպումից հետո: Ինչպես գիտենք արդեն, այդ հանդիպման արդյունքների հիման վրա նախագահներ Սարգսյանն ու Ալիեւը պատասխանատվություն են հայտնել «շարունակել ԼՂ հակամարտության լուծման բացառապես խաղաղ ճանապարհների որոնման աշխատանքները», հետեւաբար, երկու նախագահներն էլ ընդունում են, որ այդ ճանապարհները սպառված չեն, եւ որ ԼՂ հակամարտության խաղաղ լուծումն այլընտրանք չունի: Սրանից անմիջապես հետո սահմանում լարվածությունը թուլացավ, ինչը փաստում է, որ Իլհամ Ալիեւը անմիջականորեն ազդում է այնտեղ տեղի ունեցող իրադարձությունների վրա, օրինակ հրամայելով՝ դիվերսիոն գործողությունների գնով սահմանում լարված մթնոլորտ ապահովել, կամ հակառակը՝ թոթափել լարվածությունը: Կնշանակի, եթե անգամ Ադրբեջանում իրապես կան զիլ տղերք, ովքեր ոչ քնում, ոչ ուտում, այլ միայն մտածում են «Խանքենդիում» խորոված անելու մասին, ապա այդ տղերքն անգամ անմիջականորեն հետեւում են Իլհամ Ալիեւի բոլոր հրամաններին:

Հետեւաբար, սահմանում իրավիճակի լարվածության թոթափմամբ Իլհամ Ալիեւն ուղղակի ապացուցեց, որ ավելի վաղ նույն սահմանային գծում լարումը եւս իր գործունեության արդյունքն էր:

Սա՝ ինչ վերաբերում է Ադրբեջանին ու նրա նախագահին:

Մենք, սակայն, պակաս անելիք չունենք: Ընդ որում, այս կապակցությամբ բանակի հարցով մեր անելիքը ոչ այնքան բանակի կյանքի լուսաբանումն է, որքան բանակի մասին հաճախ լռելը, ոչ թե որպեսզի թաքցնենք նրա թերություններն ու այնտեղ տեղի ունեցող, օրինակ, հանցագործությունները, այլ՝ բանակի գործոնը, ոչ պատերազմական ժամանակաշրջան ապրող մեր խաղաղ երկրի համար ասիճանաբար գոնե երկրորդ, երրորդ պլան նետելու նպատակով: Ղարաբաղյան հակամարտությունը՝ բանակի միջոցով մենք այլեւս լուծել ենք, հետեւաբար բանակն այս հակամարտության մեջ այլեւս ասելիք չունի: Սա ամենեւին չի նշանակում, որ այն պետք է գրվի, կամ թուլացնի իր զգոնությունը, կամ վերածվի Երեւանի Կրկեսի պես մի բանի, այսինքն՝ մոռացվի: Սա ընդամենը նշանակում է, որ մեր լրահոսում, հետեւաբար մեր խոսակցություններում բանակի թեման պետք է իր տեղը զիջի դիվանագիտության, քաղաքականության, խաղաղության (չխառնել՝ թուլության հետ) թեմաներին:

Այսօր, սակայն, ԼՂ հակամարտության բոլոր կողմերում էլ գործող թիվ մեկ «անձը» երկրների բանակներն են: Արցախի հիմնահարցի, ինչպես ասում են՝ «բացառապես խաղաղ լուծման ճանապարհները որոնելու ընթացքում», այս կողմից մենք լսում ենք, թե ինչպես է մեր զինվորներին հաջողվել կանխել հակառակորդի դիվերսիոն ներթափանցման փորձը, այն կողմից էլ՝ նույնը՝ մեր մասին: Մինչդեռ հակամարտության մասին տեղեկությունների բացառապես զինվորական, ռազմական լինելը ենթադրում է պատերազմի շարունակականություն, դրա լայնածավալ վերսկսման հավանականություն: Երկու հասարակություններին պարբերաբար նման իրադարձությունների ականատեսն ու ականջալուրը դարձնելը չավարտված պատերազմի խոստովանություն է...

Իսկ, եթե պատերազմը չի ավարտվել, ուրեմն բոլոր կողմերում էլ դիվանագիտություն չկա: Հետեւաբար՝ դիվանագիտություն եւ դիվանագետ, ծանր պատերազմ հաղթած զինվոր եւ աշխարհի տասը երկրների ներառմամբ տանկային բիաթլոնում միայն ռուսներին առաջ թողած բանակ մենք արդեն եւ վաղուց ունենք: Մենք մեր տանկերին ու տանկիստներին արժանի գրիչներ ու գրող-ստորագրողներ չունենք:

Իսկ մերձմոսկովյան «Ալաբինո» ուսումնավարժական զորավարժարանում կայացած «Տանկային բիաթլոնում» Ադրբեջանը չի էլ մասնակցել, հետեւաբար նրանք տանկիստներ էլ չունեն, եթե, իհարկե, սա գոհացնում է մեզ:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

## Էբոլայի դեմ կիրառվում են նույնիսկ չփորձարկված պատվաստանյութեր

**Հայաստանում «Ազգը» առաջին լրատվամիջոցն էր, որ 2014 թ. մարտի սկզբներին պատմեց Արեւմտյան Աֆրիկայում սկսված էբոլա տենդի վտանգների մասին: Թերթը հետագայում եւս անդրադարձավ այդ հիվանդության համաճարակային բնույթին, մասնավորապես նշելով, որ դրա բուժման միջոցներ առայժմ գոյություն չունեն: Այդ վիրուսով ախտահարվելու դեպքում մահանալու հավանականությունը հասնում է 90 տոկոսի: Պատահական չէ, որ մարդկանց վրա զանազան պատվաստանյութերի երկարատեւ փորձարկումների արդյունքներին չսպասելով՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը թույլատրել է հիվանդներին բուժել փորձնական պատվաստանյութերով:**

**Համաճարակը ներկայումս մոլեգնում է Լիբերիայում, Գվինեայում, Սիերա Լեոնեում եւ Նիգերիայում: Միայն Լիբերիայում, ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալության տվյալներով, էբոլայի վիրուսով ախտահարված 466 մարդ է մահացել: Արեւմտյան Աֆրիկայում զոհերի թիվ 1229 է եւ շարունակում է աճել: Ախտահարված անձանց թիվը առնվազն 2240 է: «Ազգ»ը օգոստոսի 1-ի համարում գրեց, որ էբոլայից պաշտպանվելը չափազանց դժվար է, եւ որ ախտահարված բժիշկների եւ ճանապարհորդների միջոցով վիրուսի տարածման վտանգը արդեն իսկ առկա է ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Հոնկոնգում եւ մի քանի այլ երկրներում:**

**Օգոստոսի 20-ին Լիբերիայի պետական ռադիոն հաղորդեց, որ երկրում պարետային ժամ է հաստատվել համաճարակի պայմաններում բնակչության տեղաշարժը վերահսկելու նպատակով: Ավելի վաղ՝ հուլիսի 31-ին, արտակարգ դրություն էր հայտարարվել Սիերա Լեոնեում, օգոստոսի 8-ին՝ Նիգերիայում, օգոստոսի 13-ին՝ Գվինեայում:**

## Քուրդ նախարարները վերադառնում են

**Իրաքի քուրդ նախարարները օգոստոսի 20-ին հայտարարեցին, որ վերադառնում են կառավարություն: Քուրդ դիվանագետ Խոշիյար Զեբարին ասել է. «Ես Բաղդադ վերադարձա զբաղեցնելու արտաքին նախարարի պաշտոնը»: Կառավարությունում քրդերի առավել բարձրաստիճան ներկայացուցիչը փոխվարչապետ Ռոժ Նուրի Շավեյսն է:**

**Քրդերը հունիսից բոյկոտում էին նախկին վարչապետ Նուրի ալ Մալիքիի կառավարության նիստերը: Բողոքի առիթը ալ Մալիքիի այն հայտարարությունն էր, թե Իրաքյան Քրդստանի մայրաքաղաք Էրբիլը «ջիհադիստների աղաստարան է»: Նա քուրդ առաջնորդներին նաեւ ամբաստանել էր «Իրաքի եւ Լեւանտի իսլամական պետության» գրոհայիններին թաքցնելու մեջ:**

**Քուրդ նախարարների վերադարձը կարելի է համարել նոր վարչապետ Հայդեր ալ Աբադիի առաջին էական հաջողություններից մեկը, նշում է Ռոյթեր գործակալությունը:** Պ. Ք.

AZG NEW SHABAT.QXD 21/08/2014 22:44 Page 6



# «Եվրոպական» ներկա եւ ապագա Վրաստանի, Մոլդովայի եւ Ուկրաինայի համար

## *ԵՄ հետ ասոցիացման առասպելներն ու իրականությունը*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Նախկին ԽՍՀՄ կազմում գտնվող երեք երկրներ՝ Ուկրաինան, Մոլդովան եւ Վրաստանը հանդիսավորությամբ ստորագրեցին Եվրոմիության (ԵՄ) հետ ասոցիացման համաձայնագիրը: Հիշեցնեմ, որ նմանատիպ համաձայնագիր պետք է նախաստորագրվեր նաեւ Հայաստանի հետ: Սակայն, այն բանից հետո, երբ Հայաստանը որոշեց Մաքսային Միություն մտնել, ԵՄ պաշտոնյաները հայտարարեցին, որ Հայաստանը չի կարող լինել եւ Մաքսային Միության մեջ, եւ ԵՄ հետ ասոցիացվել: Հետագայում, նրանց վերջնագրային տոնը փոքր-ինչ մեղմացավ:

Այդուհանդերձ, Հայաստանի պարագայում ԵՄ հետ ասոցիացման հիմնական արդյունքը, հակառակ իշխանությունների կողմից պարբերաբար արվող լավատեսական հայտարարություններին, ոչ միայն չնչին նշանակություն էր ունենալու մեր տնտեսության համար, այլեւ փիչ իրատեսական էր դրան հասնելը: Խոսքը 4-5 տարի հետո ասոցիացման շնորհիվ հավելյալ 2,3 տոկոս տնտեսական աճ ունենալու մասին էր: Ասոցիացման արդյունավետության դեմ բերվող հակափաստարկները բազմաթիվ էին՝ սկսած ԵՄ հետ ազատ տեղաշարժի բացակայությունից մինչեւ հայկական արտադրանքի համար եվրոպական շուկաներում տեղ զբաղեցնելու անհավանականությունը: Պարզ է, որ ինչպես Հայաստանի, այնպես էլ վերոնշյալ երեք երկրների հետ ԵՄ հետ ասոցիացման բուն նպատակը քաղաքական է՝ սահմանափակել Ռուսաստանի ազդեցությունը հետխորհրդային տարածքում: Ինչ մնում է տնտեսական բաղադրիչին, ապա այն չի արդարացնելու այդ երկրներում այդ համաձայնագրին հավատացողների ակնկալիքները: Ընդ որում, անգամ եթե հաշվի չառնենք Ռուսաստանի եւ Արեւմուտքի միջեւ սկիզբ առած «արգելքների պատերազմը»:

### Հավելյալ վճար արտահանման ենթակա վրացական 28 ապրանքների համար

Վրաստանի հետ «խորը եւ համապարփակ» համաձայնագրում, եվրոչինովնիկները **Վրաստանից Եվրոմիության երկրներ արտահանելու դեպքում 28 ապրանքների համար սահմանել են լրացուցիչ վճարներ**: Դրանք պատահական ապրանքներ չեն՝ բոլոր ցիտրուսային եւ մնացած մրգերը (խաղող, տանձ, խնձոր, մանդարին եւ այլն), բանջարեղենը, ընդ որում ինչպես թարմ վիճակով, այնպես էլ վերամշակված: Փաստորեն, բոլոր այն ապրանքները, որոնք Վրաստանը գոնե տեսականորեն կարող էր արտահանել դեպի ԵՄ երկրներ: Եվրոպական շուկա մտնելն ինքնին մեծ ծախսեր է պահանջում՝ սանդարտներին համապատասխանեցման, մարկետինգի, գովազդի համար, դրանով բավականին բարձացնում ինքնարժեքը եւ փիչ հավանական դարձնում արտահանումը, էլ չենք խոսում փաթեթավորման եվրոպական չափանիշների մասին, որոնք համեմատության ոչ մի եզր չունեն վրացական ավանդական շուկաների պահանջների հետ: Պարզ է, որ լրացուցիչ վճար սահմանելու դեպքում այդ հավանականությունը շատ ավելի է նվազելու:

Մինչդեռ, Վրաստանից արտահանումը դեպի ԱՊՀ երկրներ եւ հիմնականում Ռուսաստան կազմել է այդ երկրի ընդհանուր արտահանման 52 տոկոսը, այն պարագայում, երբ դեպի ԵՄ երկրներ՝ 22 տոկոս: Մեկ հետաքրքրական փաստ: Երբ Ռուսաստանը բացեց իր շուկան վրացական գինիների, հանքային ջրերի եւ մասամբ նաեւ գյուղմթերքների առաջ, այս ապրանքների արտահանման ցուցանիշը 45 մլն դոլարից դարձավ 190 մլն դոլար: **ԵՄ հետ ասոցիացման ջատագովները ոչ մի կերպ չեն բացատրում, թե ինչո՞վ էր պայմանավորված այս ապրանքների արտահանման անկումը Ռուսաստանի կողմից դրանց ներմուծումն արգելելուց եւ կտրուկ աճը՝ թույլատրելուց հետո, ինչո՞ւ վրացական ապրանքներն այդ ընթացքում չկարողացան հասատվել ԵՄ շուկայում**: Չեն բացատրում, որովհետեւ հարկ կլինի նաեւ բացատրել, թե ինչպե՞ս են դրանք արտահանվելու դեպի ԵՄ շուկա ասոցիացումից հետո, անգամ եթե չավելանար լրացուցիչ վճարը:

Ե՞րբ, քանի՞ տարիների ընթացքում վրացական եւ ոչ միայն վրացական արտադրողները պետք է վերազինեն իրենց արտադրությունները, սեփական բրենդը ճանաչելի դարձնեն ԵՄ երկրներում, ի՞նչ միջոցներով դա պետք է անեն եւ այդ տարիների ընթացքում որտե՞ղ պետք է սպառեն իրենց արտադրանքը, եթե ավանդական ռուսական շուկան օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով դարձյալ փակվի: Ի՞նչ երաշխիք, որ այդ ամենից հետո, ԵՄ անդամ երկրների (Հունաստան, Կիպրոս, Իսպանիա, Իտալիա, Բուլղարիա, նաեւ Իսրայել) համանման ապրանք արտադրողները չեն սկսի «նեղվել» իրենց նոր մրցակիցներից եւ չեն պահանջի նոր սանդարտներ սահմանել նրանց արտադրանքի համար:

**Այլ բան է մարդու իրավունքների պահպանման, ժողովրդավարության զարգացման, կոռուպցիայի դեմ պայքարելու մասին խոսելը եւ անգամ գումարներ տրամադրելը, այլ բան, երբ բախվում ես տնտեսական իրողությունների հետ:** Վերոնշյալ նպատակների համար դրամաշնորհները ներդրումներ չեն եւ ոչ մի կերպ չեն կարող նպաստել տարեկան 4,3 տոկոս հավելյալ տնտեսական աճին, ինչը խոսանում է ԵՄ հետ ասոցիացման համաձայնագիրը Վրաստանին:

Չմոռանանք նաեւ, որ Վրաստանն ունի քաղաքական հակամարտություններ Ռուսաստանի հետ Հարավային Օսեթիայի եւ Աբխազիայի առնչությամբ, ինչը նշանակում է, որ Ռուսաստանը միայն տնտեսական լծակները չէ, որ կարող է օգտագործել իր շահերը պաշտպանելու համար:

### Մոլդովա՝ քվոտաներն ավելացնելու ԵՄ-ն խոսումը մինչ իր նկատմամբ Ռուսաստանի պատասխան արգելքն էր

Մոլդովայի համար ԵՄ ասոցիացումը խոսացել է 5,4 տոկոս հավելյալ տնտեսական աճ, բնականաբար այս բարեփոխումների, սանդարտների համապատասխանեցման, արտադրությունների վերազինման եւ այլ պահանջների բավարարման դեպքում: Մոլդովային խոսանում են առանց վճարների գյուղմթերքների արտահանում դեպի ԵՄ շուկա, իսկ որոշ՝ առավել զգայուն մթերքների համար՝ որոշակի անցումային ժամկետ: Այդուհանդերձ, այս երկրի համար նույնպես կառաջանան նույն բարդությունները եվրոպական շուկա մուտք գործելիս՝ մասնավորապես գյուղմթերքների առումով: Արդյունաբերական արտադրության մասին խոսելն իսկ անիմաստ է, քանի որ մոլդովական արդյունաբերությունը հիմնականում կենտրոնացած է այդ երկրից իրեն անկախ հայտարարած Մերձդնեստրյան Հանրապետությունում: Ի դեպ, այն եւս մեկ խաղաթուղթ է Ռուսաստանի ձեռքին: Չնայած այս պահին Ռուսաստանը կիրառում է միայն տնտեսական լծակները:

Հուլիսից «Ռոսպոտեբնադզորը» արգելել է մոլդովական մսի, մրգերի եւ բանջարեղենի եւ դրանց պահածոների ներմուծումը իր երկիր՝ անվտանգության չափանիշներին անհամապատասխանելու պատճառաբանությամբ: Անցյալ տարվա սեպտեմբերին նման սահմանափակում Ռուսաստանը մտցրել էր մոլդովական ալկոհոլի ներմուծման համար: **Այս քայլերը, բնականաբար, ծանր վիճակ են ստեղծել Մոլդովայի համար, քանի որ միայն մրգերի արտահանումը Ռուսաստան կազմում է այդ երկրի ամբողջ արտահանման 15 տոկոսը**: Ի՞նչ է անում Եվրոմիությունը:

ԵՄ-ն խոստանում է ավելացնել մոլդովական գյուղմթերքների՝ առանց վճարների դեպի ԵՄ արտահանման քվոտաները՝ հոկտեմբերի 1-ին, բայց մոլդովական կողմի խնդրանքով՝ օգոստոսի 1-ից: **ԵՄ-ն խոստանում է, բայց դա անելն այդքան էլ հեշտ չէ, քանի որ ոչ միայն բավականին ծախսեր ու հավելյալ բարդություններ է ենթադրում**, այլեւ, որ այդ խոստումը տվել է մինչեւ Ռուսաստանի կողմից ԵՄ-ում արտադրվող մթերքների ներմուծման արգելքը, ինչը փաստացի նշանակում է, որ ստեղծված իրավիճակում դժվար թե այդ քվոտաները հասկացնեն Մոլդովային:

Այնուամենայնիվ, Մոլդովան ունի մի առավելություն՝ «ավագ եղբայր», ԵՄ անդամ Ռումինիան: Երբ նշվում է, որ 2013-ին մոլդովական ապրանքների արտահանումը դեպի ԵՄ ավելացել է, հարկ է ընդգծել, որ դա տեղի է ունեցել առավելապես դեպի Ռումինիա արտահանման որոշ ավելացման շնորհիվ: Սակայն, դեռեւս անհասկանալի է, թե որքանո՞վ Ռումինիայի առկայությունը կնպաստի Մոլդովայի ինտեգրմանը ԵՄ-ին: Մանավանդ, որ ԵՄ մտնելուց հետո, ռումինական տնտեսությունը նույնպես ծանր ժամանակներ է ապրում: Ակնհայտ է մեկ բան, որ մոլդովական ապրանքները ԵՄ շուկայում հասատվելու համար ունեն նույն խնդիրները, ինչ վրացական եւ նախկին խորհրդային տարածքի որեւէ այլ երկրի ապրանքները:

Միաժամանակ, առանց մաքսերի առեւտրի պարագայում, եվրոպական ապրանքներն ավելի հեշտությամբ կգրավեն Մոլդովան: Այդ երկրի բնակչության համար կարճաժամկետ հատվածում դրական կլինի, բայց տեղական արտադրողների, այդ թվում գյուղմթերքներ արտադրողների համար դա կլինի քաշային կարգերի անհավասար պայքար՝ ենթադրելի ելքով:

### ԵՄ հետ Ուկրաինայի ասոցիացումը մեկ տարում արժենում է 37 մլրդ դոլար՝ չհաշվածի պատերազմի կորուստները

Ուկրաինայի համար ԵՄ ասոցիացումը ամենածանր հետեւանքներն է ունենալու՝ անկախ այդ երկրի հարավ-արեւելքում շարունակվող եւ հսկայական նյութական ու մարդկային ռեսուրսներ խլող պատերազմից եւ Ղրիմի անջատումից: **Երբ Վիկտոր Յանուկովիչը հետաձգեց այդ համաձայնագրի ստորագրումը, դրա հետեւում առավելապես տնտեսական պատճառներն էին**: Ասոցիացումը, ըստ ուկրաինական կառավարության այն ժամանակվա հաշվարկների, երկրի տնտեսության վրա կարժենար 37 մլրդ դոլար, քանի որ Մաքսային Միության երկրների՝ Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելառուսի հետ Ուկրաինայի առեւտուրը կրճատվելու էր երեք անգամ, իսկ դրա փոխհատուցման մասին ԵՄ-ն ոչինչ չէր ասում: Դրա համար էլ ԵՄ-ն նախընտրեց պայմանագրի ստորագրման այլ տարբերակ՝ հեղաշրջմամբ փոխելով քաղաքական իշխանությունը Ուկրաինայում:

Սակայն դառնանք ԵՄ հետ ասոցիացման ուկրաինական կորուստներին, որոնց համարժեք փոխհատուցում ԵՄ-ն ցանկության դեպքում անգամ չի կարող տալ: Ուկրաինական վերլուծական կենտրոնի տնօրեն Ալեքսանդր Օխրիմենկոյի տեղեկացմամբ, ԵՄ հետ ասոցիացման ստորագրումից հետո Ուկրաինայի ՀՆԱ-ն առաջին իսկ տարում կրճատվի 11 տոկոսով: Համեմատության համար նշենք, որ միջազգային վարկանիշային Moody`s գործակալությունը գրեթե նույն՝ 10 տոկոս անկում է կանխատեսում այս տարի Ուկրաինայի տնտեսության համար:

**ՀՆԱ-ի անկումը առաջիկա հինգ տարիներին կկազմի 25 տոկոս, քանի որ այդքան է կազմում Ուկրաինայից Ռուսաստան արտահանման ծավալը:** Կորուստները ավելի մեծ կլինեն, քանի որ ԵՄ հետ համաձայնագիրը սահմանում է մետաղագործական, քիմիական գործարանների, ջերմաէլեկտրակայանների եւ ընդհանրապես բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների վերազինման խիստ պահանջներ: **Այդ ամենի իրականացումը գնահատվում է 150-160 մլրդ դոլար առաջիկա 10 տարվա ընթացքում: Թեեւ ուկրաինական իշխող քաղաքական ուժի քարոզչությունն առաստել է համարում այդ թիվը, բայց իրականությունն այն է, որ իրականում դրանից ավելի մեծ գումար կպահանջվի**:

Վերոնշյալ թիվը այս պահի հաշվարկներով է արված, սակայն ուկրաինական անկայուն տնտեսությունում այս նպատակով խոշոր ներդրումներ անել ցանկացողներ չկան: Միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից խոստացված 13 մլրդ դոլարը գնալու է միայն վարկերով հստակ սահմանված միջոցառումների ֆինանսավորմանը: Հետեւաբար, որքան ավելի հետաձգվեն ներդրումները խոշոր ձեռնարկություններում, այնքան դրանց վիճակն ավելի կվատանա, իսկ պահանջվող ներդրումների ծավալը կավելանա: Այս պարագայում նախատեսված 10 տարի անցումային ժամկետը կարող է ձգվել տասնամյակներ: Դժվար է երեւակայել, որ դա առանց ցնցումների տեղի կունենա:

Ասվածին եթե ավելացնենք Ուկրաինայի արդյունաբերական կենտրոն Դոնբասի ավերումը պատերազմական գործողությունների հետեւանքով, ապա այդ երկրի տնտեսության հեռանկարները առավել քան մռայլ են դառնում:

⇨7

AZG NEW SHABAT.QXD 21/08/2014 22:44 Page 7



ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ չէ՞

«Օգոստոսի 19-ին Նախիջեւան քաղաքում համազորային բանակի շտաբում տեղի է ունեցել Ադրբեջանի, Թուրքիայի եւ Վրաստանի պաշտպանության նախարարների հանդիպումը: Ըստ պաշտպանության նախարարության մամուլի ծառայության տեղեկատվության, նախարարները դիտարկել են տարածաշրջանի ռազմա-քաղաքական իրավիճակը, մտքեր փոխանակել անվտանգության հիմնախնդիրների շուրջը եւ քննարկել ռազմական ոլորտում համագործակցության հարցերը»,- հաղորդել է ադրբեջանական «Թուրան» գործակալությունը:

Հայտնի է դարձել նաեւ, որ ձեռք է բերվել առնվազն երկու պայմանավորվածություն՝ կես տարին մեկ նման հանդիպումներ կազմակերպելու եւ համատեղ զորավարժություններ անցկացնելու մասին: Ավելի վաղ Նախիջեւանում եւ Բաքվի մերձակայքում անցկացվել էին թուրք-ադրբեջանական համատեղ զորավարժություններ: Ադրբեջանի պաշտպանության նախարարը եռակողմ հանդիպման ավարտին տեղեկացրել է, որ «կողմերը կանցկացնեն նավթա-գազային ենթակառուցվածքների պաշտպանության համատեղ զորավարժություններ»:

Խոսքն ակնհայտորեն Ադրբեջանից Վրաստանի տարածքով Թուրքիա անցնող նավթա-գազային ենթակառուցվածքների մասին է, որոնց «պաշտպանության անհրաժեշտություն» կարող է առաջանալ միայն տարածաշրջանային լայնածավալ պատերազմի դեպքում: Ո՞ւմ կողմից են «նավթա-գազային ենթակառուցվածքներին սպառնացող վտանգ» տեսնում Ադրբեջանը, Թուրքիան եւ Վրաստանը՝ մնում է միայն ենթադրել:

Բանն այն է, որ, չնայած Թբիլիսիում իշխանության փոփոխությանը, վրաց-ռուսասանյան հարաբերությունները չափազանց հեռու են բարեկամական լինելուց, Վրաստանը մշտապես կասկածում է, որ Մոսկվան «կարող է դիմել նոր ռազմական միջամտության»: Իսկ ահա ռուս-ադրբեջանական եւ ռուս-թուրքական հարաբերությունները դժվար է անգամ լարված որակել:

Այս համատեքստում ուշագրավ է, որ Նախիջեւանում Ադրբեջանի, Թուրքիայի եւ Վրաստանի պաշտպանության նախարարների հանդիպումը եւ ձեռք բերված պայմանավորվածությունները որեւէ կերպ չեն մեկնաբանվում ռուսասանյան ոչ միայն պաշտոնական, այլեւ՝ փորձագիտական եւ քաղաքական շրջանակներում: Ո՞րն է ռուսասանյան կողմի «բացահայտ անտարբերության» պատճառը:

Եթե խոսքը վերաբերեր միայն թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությանը, ապա Մոսկվայի լռությունը կարելի կլիներ գնահատել վերջերս ՌԴ նախագահի ներկայությամբ Վլադիմիր Ժիրինովսկու հնչեցրած տեսակետի կտրվածքով, երբ կոչ էր անում դաշնակիցներ տեսնել միայն իսլամական աշխարհում: Բայց չէ՞ որ ուրվագծվում է եռակողմ ռազմական համագործակցություն, որտեղ ներգրավվում է նաեւ Վրաստանը, երկիր, որի հետ Ռուսաստանը «առանձնակի հարաբերություններ» ունի:

Չէ՞ որ փաստացի Սեւ եւ Կասպից ծովերի միջակայքում ստեղծվում է երեք երկրների ռազմական դաշինք, որի առանցքային խնդիրը «նավթա-գազային ենթակառուցվածքների պաշտպանությունն է»: Իսկ որ ադրբեջանցի եւ վրացի փորձագետները մեկ անգամ չէ, որ այդ ենթակառուցվածքներին Մոսկվայից «սպառնացող վտանգ» են տեսել, ոչ մեկի համար գաղտնիք չէ:

Դիտարժան է նաեւ, որ Նախիջեւանի եռակողմ հանդիպումը տեղի ունեցավ Սոչիում ՌԴ նախագահի միջնորդությամբ Հայաստանի եւ Ադրբեջանի առաջնորդների միջեւ բանակցությունների հետո: Իսկ թե ինչ իրավիճակ էր ստեղծվել ադրբեջանա-ղարաբաղյան զորքերի շփման գծում եւ հայ-ադրբեջանական սահմանում դրան նախորդած օրերին՝ ոչ մեկի համար գաղտնիք չէ:

Հուլիսի վերջին-օգոստոսի սկզբին Ադրբեջանը փաստորեն անցել էր տարներ ի վեր մշակված՝ «կայծակնային պատերազմի» փորձարկմանը: Միայն հայկական զինուժի համարժեք պատասխանը պետք է համարել Սոչիի հանդիպման գրավականը: Հակառակ դեպքում Ադրբեջանը չէր ընդունի ՌԴ նախագահի միջնորդությունը, ինչպես որ տեւական ժամանակ մերժում էր Ֆրանսիայի նախագահին:

Այս իմաստով, գուցե, Նախիջեւանի հանդիպումը փորձ է, որպեսզի Ադրբեջանը «դեմքը փրկի»՝ կրած ծանր ռազմա-քաղաքական եւ դիվանագիտական պարտությունից հետո: Այս հարցում, անշուշտ, Թուրքիան չափազանց շահագրգռված կողմ է: Չէ՞ որ ադրբեջանական բանակի կորուստներն այդ երկրի արտգործնախարարը համարել էր նաեւ իրենցը: Բայց ո՞րն է այստեղ Վրաստանի «խաղը»:

Վրաստանը նավթա-գազային տարանցիկ երկիր է միայն: Ընդ որում, վրացի որոշ մեկնաբաններ այնքան էլ հիացած չեն իրենց երկրի տնտեսությունում Ադրբեջանի եւ Թուրքիայի ներկայացվածությամբ եւ համարում են, որ այդ կերպ վրացական ինքնությունը տուժում է: Բիձինա Իվանիշվիլիի կառավարությունը նույնիսկ մտադիր էր վերանայել որոշ գործարքների օգտակարությունը՝ նկատելով, որ Միխեիլ Սաակաշվիլին շաս դեպքերում տուրք է տվել Իլհամ Ալիեւի հետ «քաղաքական պայմանավորվածությունների, որոնք ունեն ակնհայտ կոռուպցիոն բաղադրիչներ»:

Ամենակարեւորը, սակայն, այն է, որ եռակողմ պայմանավորվածությունները, եթե ինչ-որ բան գործնականում կյանքի կոչվելու լինի, կարող են գործել միայն Թուրքիայի «բարձր հովանու» ներքո, որովհետեւ ոչ Ադրբեջանը, ոչ, մանավանդ՝ Վրաստանը, տարածաշրջանի նավթա-գազային ենթակառուցվածքների պաշտպանության հարցն ինքնուրույնաբար լուծել չեն կարող: Իսկ Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ երկիր է եւ պարտավոր է իր քայլերը համաձայնեցնել դաշինքի անդամ մյուս պետությունների հետ:

Այս դեպքում ո՞րն է լինելու Ռուսաստանի պատասխանը: Չէ՞ որ Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան ռազմական համագործակցության համար «պատերազմի թատերաբեմ» կարող է դիտվել միայն եւ միայն Հարավային Կովկասը, տարածաշրջան, որն ուղղակիորեն սահմանակից է Ռուսաստանին եւ որն առայսօր ռուսաստանյան կողմն անվանում է «Անդրկովկաս»՝ ինչպես ավանդաբար ընդունված է Ռուսաստանում:

Եթե Մոսկվայից համարժեք արձագանք չհետեւի, ապա պե՞տք է, արդյոք, ենթադրել, որ Ռուսաստանի ընկալմամբ Թուրքիան «ՆԱՏՕ-ի անդամ չէ», եւ այդ երկրի յուրաքանչյուր նախաձեռնություն չի կարող Ռուսաստանի համար սպառնալիք լինել, եթե անգամ դրանում ներգրավվում է Եվրոմիության հետ ասոցիացման պայմանագիր ստորագրած Վրաստանը:

Հնարավոր է՝ Մոսկվայում հենց այդ կտրվածքով էլ «անտեսում են» Նախիջեւանի եռակողմ՝ Ադրբեջան-Թուրքիա-Վրաստան ռազմա-քաղաքական հանդիպումը: Բայց այդ դեպքում էլ ուրիշ հարց է ծագում՝ իսկ ինչպե՞ս է Մոսկվան վերաբերվում այն բանին, որ երեք երկրներ փաստացի փորձում են համախմբվել տարածաշրջանում իր միակ դաշնակցի՝ Հայաստանի դեմ: Թեեւ, ըստ ակնհայտի, այդ հարցը պետք է իրեն առաջադրի արդեն Հայաստանը...

Ստեփանակերտ

# Կկարողանա՞ն օգտվել ռուսական շուկայի բացից հայ արտահանողները

⇨1 Սակայն կարճաժամկետ հեռանկարում՝ արգելքի համար սահմանված 1 տարում, իրատեսական չէ, որ վերոնշյալ 67 մլն դոլարը ավելանա կրկնակի կամ եռակի: **Եթե այս ցուցանիշն ավելանա օրինակ՝ 30-40 տոկոսով, ապա դա արդեն էական առաջընթաց հնարավոր կլինի համարել:** Այս առումով անտեղի է խանդը, թե ինչո՞ւ է Ռուսաստանը թուրքական, ադրբեջանական կամ այլ երկրների արտահանողների հետ համագործակցում: Ոչ մի առանձին վերցրած երկիր չի կարող լրացնել ԵՄ-ից ներմուծվող ապրանքների արգելքի հետեւանքով առաջացած 12 մլրդ եվրոյի բացը ռուսական շուկայում: Հայաստանին մնում է միայն քայլեր ձեռնարկել իր տեղը ընդլայնելու ուղղությամբ:

Այս օրերին Հայաստանի կառավարությունն ու տնտեսվարողները համատեղ քննարկել են դեպի Ռուսաստան արտահանումն ավելացնելու հնարավորությունները: Վարչապետ Հովիկ Աբրահամյանը, արտահանող ձեռնարկությունների ներկայացուցիչների հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ կառավարության պատրաստակամությունն է հայտնել աջակցելու դեպի Ռուսաստան հայկական արտադրանքի արտահանման ծավալները ավելացնելուն: Արտահանողների բարձրացրել են արտահանման կազմակերպման ենթակառուցվածքների ձեւավորման եւ գործընթացի պարզեցման, մաքսելի վարկային միջոցների տրամադրման, ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման եւ սարքավորումների ձեռքբերման, արտահանման լոգիստիկ նոր սխեմաների մշակման հարցերը: Արդյունքում, Հովիկ Աբրահամյանի հանձնարարությամբ ստեղծվել է գործարարների հետ համատեղ աշխատանքային խումբ, որը մեկ շաբաթվա ընթացքում պետք է ներկայացնի քննարկված հարցերի վերաբերյալ իր առաջարկները: Միեւնույն ժամանակ, այս գործընթացում հարկ է նկատի ունենալ մի շարք հանգամանքներ:

Նախ, **արտահանվող ապրանքի ծավալների ավելացումը չպետք է տեղի ունենա որակի եւ սանդարտների հաշվին,** ինչի ռիսկը առկա է եւ ինչը կարող է բերել ոչ թե արտահանման աճին, այլ ընդհանրապես ռուսական շուկայից հայկական ապրանքների դուրս մղվելուն: Սա առաջին հերթին պետք է գիտակցեն հենց իրենք արտահանողները, ապա սանդարտների եւ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունները:

Կարեւոր է նաեւ, թե **հայկական արտադրողները ունե՞ն համապատասխան ծավալները ավելացնելու համար դրանց արտահանումը:** Հայկական ապրանքների մեծածավալ արտահանմանը մշտապես խոչընդոտել է պահանջվող քանակի բավարարման անհնարինությունը հայկական արտադրողների կողմից: Արտահանվող ապրանքի մեծ քանակներ ունենալը գուցե արագ լուծվող հարց չէ, բայց կարեւոր է ինչպես արտաքին շուկայում կայուն տեղ ունենալու, այնպես էլ արտադրանքի ինքնարժեքի իջեցման եւ ավելի մրցունակ դարձնելու համար:

**Դեպի Ռուսաստան արտահանման ծավալների ավելացմանը կարող է խանգարել նաեւ նույն Արեւմուտքը՝ ԱՄՆ-ն եւ ԵՄ-ն:** Նման փորձ վերջիններս կողմից ձեռնարկվում է Լատինական Ամերիկայի երկրների նկատմամբ: Հայաստանի իշխանություններն անելիք ունեն այստեղ՝ կանխելու համար Արեւմուտքի կողմից ոչ մի կերպ չփոխհատուցվող խանդի դրսեւորմանն ու խոչընդոտներին այս դեպքում:

Ամեն դեպքում, ենթադրելի է, որ հայ արտահանողները ունեն հնարավորություններ ավելի ամրապնդվելու ռուսական շուկայում: Եթե գյուղատնտեսական այս տարին բարենպաստ լիներ, այդ հնարավորությունն ավելի լուրջ եւ նկատելի կլիներ: Մնում է միայն օգտագործել առկա կարողությունները ու ռեսուրսները:

# «Եվրոպական» ներկա եւ ապագա Վրաստանի, Մոլդովայի եւ ...

⇨6 ԵՄ ասոցիացման համաձայնագիրը Ուկրաինային պառակտումից, տնտեսական անկումից, պատերազմից եւ սոցիալական վիճակի վատթարացումից բացի ոչինչ չի տվել առայժմ: Իսկ ապագայի վերաբերյալ կանխատեսումներին ու դրանց հիմնավորումներին արդեն անդրադարձանք:

## Ի՞նչ կփոխեն Ռուսաստանի պատասխան արգելքները Արեւմուտքին

Ռուսաստանի կողմից՝ ԱՄՆ-ից, Կանադայից, ԵՄ երկրներից սննդամթերքի ներմուծման արգելքները առաջին հերթին հարվածելու են հենց հետխորհրդային երեք երկրներին: ԵՄ երկրների գյուղմթերքներ արտադրողներն իրենք չգիտեն, թե որտե՞ղ եւ ինչպե՞ս են սպառելու իրենց ապրանքը, իսկ կառավարությունները, թե որքա՞ն եւ ինչպե՞ս են փոխհատուցելու նրանց կորուստները: **Արեւմտյան ճնշումներին Ռուսաստանի պատասխան քայլերի հետեւանքով, միայն ԵՄ-ից Ռուսաստան արտահանումը նվազելու է 12 մլրդ եվրոյով: ԵՄ ղեկավարները խոսում են միայն 400 մլն եվրո փոխհատուցման հնարավորության մասին: Բնական է, որ այդ փոխհատուցումը չի տվելու Մոլդովային, Վրաստանին կամ Ուկրաինային, քանի որ որպես փոխհատուցում անգամ ԵՄ երկրների գյուղմթերք արտադրողների համար դա չնչին գումար է:** Վերջիններս հարկադրված են լինելու ԵՄ շուկայում ավելի ցածր գներով վաճառել իրենց մթերքները, կրկնակի կորուստներ ունենալով: Նման պայմաններում հազիվ թե ԵՄ ղեկավարությունը քվոտաներ ավելացնի մոլդովական ապրանքների կամ լրացուցիչ վճարները հանի վրացական ապրանքների համար:

Վերոնշյալը հաստատում է փաստարկը, որ ԵՄ հետ ասոցիացումը՝ ԵՄ եւ հետխորհրդային երկրների քաղաքական որոշակի շրջանակների շահերին համապատասխանող, բայց տնտեսական իրողություններին եւ տրամաբանությանը դեմ գնացող, քաղաքական նպատակներ հետապնդող քայլեր էին: Հայաստանը գուցե ակամայից եւ բարեբախտաբար չգնաց այդ ճանապարհով, իսկ երկրի իշխանությունները կարողացան ճիշտ կողմնորոշվել առկա իրողությունների եւ ոչ իրատեսական հեռանկարների միջեւ:

AZG NEW SHABAT.QXD 21/08/2014 22:44 Page 8



**Յակոբ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ**

## Արժանթինահայ դերասան Գալուստ Ճանսըզեանի մենակատարութիւնը Թէքէեանի բեմէն

**Օրերս Նիւ Ճըրզիի Թէֆէեան կեդրոնի մէջ առանձին ներկայացումով բեմ ելաւ արժանթինահայ տաղանդաւոր դերասան Գալուստ Ճանսըզեանը: Ան հիւրն էր, այդ երեկոյ, ԹՄՄ «Մեր Մկրտչեան» թատերախումբին:**

**Գալուստին թատերական վաստակը կու գայ Պէյրութէն, երբ ան գլխաւոր դերասաններէն էր եղած Լիբանանի Համազգայինի «Գասպար Իփեկեան» թատերախումբին, որուն բեմադրիչն էր թատերական ծանօթ գործիչ Ժորժ Սարգիսեան: Ան թատերական հիւրախաղերով այցելած է զանազան հայաշատ կեդրոններ՝ Միջին Արեւելք, Եւրոպա եւ Ամերիկաներ: Պուէնոս Այրէս այցելութեան հանդիպած է իր կեանքի աղագայ ընկերոջ՝ արժանթինահայ դարձեալ թատերական գործիչ Հերմինէին ու այնուհետեւ հոն ալ ընտանիք կազմած ու արդէն մօտ 40 տարիներէ ի վեր Արժանթին հաստատուած:**

**Հարաւային Ամերիկայի մէջ ազգային թատերական աւանդութիւնները վառ պահող գրեթէ միա՛կ դերասանն է Գալուստ Ճանսըզեան: Մայրաքաղաքի հայկական թաղամասին մէջ ունի իր սրահը «Թատրոն» անունով, թէեւ փոքր իր տարածութեամբ, սակայն լեցուն իր հայկականութեամբ եւ մնայուն գործածութեամբ, ուր կը ներկայացուին հայկական եւ օտար հեղինակներու գործերը: Թատերախումբին բեմադրիչը Հերմինէն է:**

**«Չգիտցայ, թէ ինչպէս» ներկայացումով ան կը ներկայացնէ ազգային մեր կեանքը հայրենիքի թէ սփիւռքի տարածքին վրայ սփռուող: Այս ամէնը կու տայ իր հին ու չսպիացող վէրքերովն ու նոր մարտահրաւէրներով: Անշուշտ մեծագոյն ցաւը, որ կը ներկայացնէ այս ուրցաւ թատերական գործիչը, մեր լեզուին յամրօրէն նահանջող այսօրուան տխուր պատկերն է: Այդ աւելի զգալի է հարաւամերիկեան հայկական համայնքներէն ներս: Անոր ցաւը հետզհետէ սկսած է զգացուիլ գրեթէ բոլոր գաղութներէ ներս:**

**Կը ցաւի նաեւ չհասկցուած յարաբերութիւններուն՝ հայրենաբնակ հայուն եւ սփիւռքահայուն միջեւ: Ոչ միայն լեզուական յարաբերութիւններու, այլեւ՝ հոգեմտաւորական արժէքներու գնահատումին ու հայրենասիրական զգացումներու եւ չափանիշերու: Ան կ՚երգէ ցաւը Էրզրումի հայոց լեռներէն եկող մեր ֆեդայիներուն: Կ՚երգէ մեր երէկի յեղափոխականներու անձնազոհողութեան ոգին: Կը սգայ հայրենիքին կորուստին: Կը ջաղգովէ հայութեան քաղաքական ուժերու միութիւնը, կ՚ուզէ տեսնել եկեղեցին միացած: Մեր մշակոյթի արժէքներու տարածումը կը նկատէ անհրաժեշտութիւն: Մեր պատմութեան խորերէն եկած տխուր շրթանները կ՚ուզէ քանդել. Արտաւազդը՝ տակաւին շրթայակաղ իր ձեռքերէն կ՚ուզէ ազատել, որպէսզի այլեւս դառնանք իրաւ անկախ ու հզօր ազգ մը՝ իր հզօր ու միակ հայրենիքով:**

**Յեղասպանութեան դարադարձի նախօրէին լաւագոյն հրամցուած մենակատարութիւն մը, ուր կան պատգամներ մեր մեծ գրողներէն Վարուժանէն, Թէքէեանէն, Սիամանթոյէն ու Շանթէն:**

**Վերջապէս Գալուստ կու լայ իր իսկ ցա՛ւը եւս ... հոն՝ Ռիո Փլաթա գետի ափին, իր մինակութեան մէջ ան կը խաղայ մեր 3000-ամեայ թատրոնը, գէթ պահիկ մը եւս շարունակելու մեր այդ գեղեցիկ աւանդութիւնը՝ Հայ թատրոնը:**

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

# Սոչիի համշենական քառուղիներում

Սոչիում եղբայրս առաջարկեց այցելել տեղի հայկական ռեստորաններից մեկը, նախապես զգուշացնելով, որ նա նաեւ յուրօրինակ... թանգարան է: Ինքնին հասկանալի է, որ այս երկու հասկացությունները հաճախ չեն հոգեհարազատանում:

Գիտեի, որ Սոչիում համշենահայեր շատ կան, բայց որ նրանք ունեն իրենց «տոհմական» ռեստորանը, նորություն էր ինձ համար: Եկանք այդ էկզոտիկ հայկական անկյունը եւ մի սքանչելի երեկո անցկացրինք նրա հիմնադիր սեփականատիրոջ՝ **Էդուարդ Հարությունի Քալաջյանի** հետ: Անմիջական, կենսուրախ, հումորաշատ այս այրը մեզ գերեց իր անզուգական... համշենասիրությամբ: Ռեստորանային շքեղ համալիրը՝ գումարված ազգագրական թանգարանով, այդպես էլ կոչվում է՝ «ԸՎՔՊվրՍՈՌ ՊՋՏՐ»: Փորձել ենք հավաքական կերպար ստեղծել՝ համշենական իջեւանատուն՝ ժպտալով ասում է նա:

- Հայի, անհատի ձեւավորման իմաստով ինձ վրա հսկայական ազդեցություն է ունեցել Նշան պապս, պատմում է Քալաջյանը: Պատշաճ կրթություն չուներ, սակայն բնատուր խելք ուներ ու եզակի խիզախություն: Մեծ գերդաստանով Տրապիզոնից ոչ հեռու գտնվող Չարշամբա գյուղից մահապուրծ էին եղել եւ բնավորվել սոչիամերձ Մոլդովկա գյուղում: Պապս կարծել էր, թե կոտրածը, այսպես ասած, տեղային մասնակի բնույթ է կրել եւ վրեժխնդիր լինելու նպատակով վերադարձել էր հայրենյաց վայրերը եւ ի՞նչ տեսել՝ հիմնահատակ ավերված էր ոչ միայն իր ծննդավայրը, այլեւ բոլոր մերձակա հայկական բնակավայրերը: Մինչեւ 1923 թվականը որպես ֆիդայի մարտնչել էր թուրքերի դեմ ու նոր վերադարձել: Հիանալի հողագործ էր, ծխախոտագործ: Աբեւմտահայերն անպակաս էին մեր տանը, եւ պապս իր սիրելի թոռնիկին «մեծահոգաբար» թույլ էր տալիս ներկա գտնվել իրենց անհատնում զրույցներին: Մեծացել եմ նրանց շրջապատում: Պաշտում էի պապիս:

Չարչագույժ 37-ին Բերիան համշենահայերին այլ ազգերի հետ Մոլդովկայից տեղահանում է Աբխազիա՝ այնտեղից էշելոններով Ղազախստանի տափաստաններ վերաբնակեցնելու նենգ ծրագրերով: Սակայն մինչ հերթը հասել է նրանց, Բերիան արդեն գերակատարել էր ախտորի պլանը եւ համշենահայերին թողնում է Աբխազիայում այդ երկրամասը շենացնելու կարգադրությամբ:

- Իննսունական թվականների սկզբին ես զորացրվեցի խորհրդային բանակից (պահեստի գնդապետ եմ) եւ վերադարձա Աբխազիա, շարունակում է իր մենախոսությունը Քալաջյանը: Ուզում էի վերակառուցել-նորացնել պապական օջախը: Սակայն շշմելու բան ասաց պապս՝ մանչս, մի չարչարվիր, հայի բախտ է, երբ թոռը չի վայելում պապի տունը: Ասես մարգարե լիներ: Շուտով սկսվեց վրաց-աբխազական հակամարտությունը, եւ տեղացի շատ հայեր ստիպված տեղափոխվեցին հարեւան Սոչի:

Քալաջյանը, իհարկե, չէր մոռացել պապական տունը այդ երկրամասում, ուր նա բուն էր դրել Եղեռնից հետո: Սակայն նոր տուն կառուցելու, Ռուսաստանում բիզնես ձեռնարկելու նրա մտահղացումը, հազիվ թե անսպասելիորեն, զուգորդվեց հոգեւոր-ազգային վերածնության խոր պահանջով: Քալաջյանը, անմիջականորեն, նշանավոր Կրասնայա Պոլյանա տանող (արդեն օլիմպիական դարձած) բանուկ մայրուղու հարեւանությամբ կառուցում է մատուռ եւ բացում ազգագրական թանգարան: Զարմանալին այն է, որ սովորաբար մարդն իրեն բիզնեսում հաստատելուց հետո է տուրք տալիս զգացմունքներին, իսկ այստեղ ճիշտ հակառակը տեղի ունեցավ:

- Սկզբում մեր թանգարանի ցուցանմուշները գերազանցապես «համշենական» էին, նշում է Քալաջյանը: Մարդիկ բերում էին իրենց ունեցած զանազան հին մասունքներ, գրքեր, փաստաթղթեր եւ այլն: Հետո սկսեցին մեզ այցելել ռուսներ, հույներ, տեղացի էստոնացիներ, եւ մեր ցուցափեղկերը ընդլայնվեցին: Վերարտադրում ենք համշենահայության, Հայաստանի, Ռուսաստանի այս տարածաշրջանի պատմությունը:

Եվ եթե կան այցելուներ, ապա ինչու նրանց չհյուրասիրել համշենական ապրուստագով: Այսպես կյանք առավ «Համշենական օջախը», երբ տան կենտրոնի կրակի ծխից համուհոտ են առնում վերեւից կախված խորտիկները:

- Մեր կերակուրներն այնքան դուր եկան տեղացիներին, հյուրերին, որ արդեն չէինք հասցնում բավարարել նրանց պահանջները, գոհունակությամբ վերհիշում է Քալաջյանը: Իսկ հիմա նայեմ մեր հաստատության հարեւանությամբ գտնվող այս երկգագաթ սարին:

- Ակնարկը պարզ է:

- Դե ի՞նչ Արարատ առանց Նոյյան տապանի: Եվ մեր հաջորդ մասնաշենքը այդպես էլ կոչեցինք՝ առասպելական անունով: Նահապետի կեցվածքն էլ ձեզ դիմավորեց մուտքի մոտ: Կամաց-կամաց լրակառուցելով, մեր համալիրին տվեցինք ներկայիս տեսքը: Ներքին ձեւավորումն ու կահավորումը հո, ինչպես տեսնում եք, հին հայկական ոճի է: Ի դեպ, մատուռի մուտքը զարդարող սքանչելի խաչքարը մեզ նվեր բերեց հայոց բանակի ռազմական ոստիկանության այն ժամանակվա պետ Վլադիմիր Գասպարյանը:

Համշենական ռեստորանի հանրաճանաչությունը, եթե չասենք ժողովրդականությունը աննախադեպ է: Առանց մեկնաբանության նշենք սոսկ մի քանի «հաճախորդների» անուններ. Պուտին, Լուկաշենկո, Քոչարյան, Սարգսյան, Պրիմակով, Պատրուշեւ, Զորկի, Յակունին, անհամար նահանգապետեր, նախարարներ, արվեստի նշանավոր գործիչներ... Քալաշյանը ցույց է տալիս մի քանի հաստափոր պատվո գիրք: Իսկ ռեստորանատիրոջ «պատիվ-հարգանքը» նախանձի առարկա է: Հուսով ենք մեր հայրենակիցը չի նեղանա, եթե վերարտադրենք ռեստորանի աշխատողներից մեկի «թափուն» պատմած մի իրողություն: Մի օր այստեղ է գալիս հայտնի Դեդ Հասանը այլոց հետ: Սեղանի շուրջ տարաձայնություններ են առաջանում, եւ Դեդը մատուցողի միջոցով կանչում է Էդիկին, որ նա իր ծանրակշիռ խոսքով հանգստացնի տարբերուն տղաներին:

- Սոչիի օլիմպիադայի նախապատրաստման ու հաստատես անցկացման շրջանը ամենածանրաբեռնվածն էր մեզ համար, հոգոց է հանում Քալաջյանը: Գիշեր-ցերեկ աշխատում էինք: Հարյուրից ավելի պատվիրակություններ վայելեցին մեր ազգային խոհանոցը: Անհամար հյուրերը ժամերով համբերատար հերթի էին կանգնում: Միջազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Թոմաս Բախը իր շախմբով մեր ամենօրյա մշտական հաճախորդն էր: Միակ բանը, որ ինձ դառնություն էր պատճառում, այն էր, որ հյուրերի մի մասը, նույնիսկ առանձին պատվիրակությունների անդամներ, տեսնելով մեր սրահներում տեղ գտած բազմաթիվ խաչերը, մեր հնամյա տաճարների լուսանկարներն ու մակետները, մեր կրոնապետերի պատկերները, զարմանում էին, որ, պարզվում է, հայերս... քրիստոնյա ցեղ ենք: Էլ չեմ ասում, ապշում էին, երբ նրանց լուսավորում էինք, որ մենք առաջինն ենք քրիստոնությունն ընդունել որպես պետական կրոն:

Լավ, իսկ ինչով է զբաղվում Էդուարդ Քալաջյանը «ազատ» ժամերին: Բարեգործությամբ: Հովանավորում է տեղի հայկական դպրոցը, անապահով հայ ընտանիքների, ծերերի, վետերանների: Վերջերս տեղի «Նաիրի» երգչախումբն էր ուղարկել Երեւան: Ներկայումս զբաղված է Դոնբասից փախած 12 հայ ընտանիքների կյանքի ու կենցաղի կարգավորման հարցերով:

Պատվարժան հայ է:

Եթե երբեւէ լինեք Սոչիում, անպայման այցելեք համշենական մշակույթի ու կենցաղի այդ հավաքատեղին: Դուք ձեզ ռուսական հողում նույնքան հայ կզգաք, իսկական համշենցի: Ու զրուցեք Էդուարդ Հարությունի Քալաջյանի հետ: Բարեւսությամբ կտոգորվեք:

**Սոչի**

***Հ.Գ.-** Եղբայրս՝ Վիկտորը, որ սիրում է շրջագայել օտար-ամայի ճամփեքով ու պարտադիր այցելել հայահոտ վայրերը, ընդունում է ռեստորանային գործի երկու անհատականություն՝ Մալխասը՝ Երեւանում եւ Էդուարդը՝ Սոչիում:*

AZG NEW SHABAT.QXD 21/08/2014 22:44 Page 9



# Իրաքի նոր վարչապետը կփորձի թույլ չտալ երկրի մասնատում

Իրաքում օրերս վարչապետի պաշտոնը զբաղեցրեց Հայդեր ալ Աբադին, որը նախկին ճարտարագետ-էլեկտրատեխնիկ է, վերելակների նորոգման ու սպասարկման ֆիրմայի սեփականատեր, շիաների պահպանողական կուսակցության անդամ: Կառավարության ղեկավարի փոփոխությունը տեղի ունեցավ այսպես կոչված «Իրաքի եւ Լեւանտի իսլամական պետության» գրոհայինների հերթական հարձակման պահին: Մարտեր են մղվում մայրաքաղաք Բաղդադի մատույցներում:

Արդեն նախկին վարչապետ Նուրի ալ Մալիքիի հնարավոր պաշտոնաթողության մասին «Ազգ»ը գրել է դեռեւս հունիսին: Նա կառավարության ղեկավար էր դարձել պատահականորեն եւ միայն ամերիկացիների շնորհիվ պահպանել էր պաշտոնը 2010 թ. ընտրություններում կրած պարտությունից հետո: Վերջին տարիներին ալ Մալիքիի դիրքերը սասանվել էին կրոնական եւ կլանային հարցերում իր վարած կոշտ քաղաքականության եւ անզիջողականության պատճառով: Այս տարվա մայիսյան խորհրդարանական ընտրություններում նրա «Օրենքի պետություն» դաշինքը հաղթեց՝ ստանալով 328 տեղերից 93-ը, եւ թվում էր, թե նա 3-րդ անգամ կազբաղեցնի վարչապետի պաշտոնը, բայց «Իրաքի եւ Լեւանտի իսլամական պետության» գրոհայինների սրընթաց եւ հաջող հարձակումը խառնեց ալ Մալիքիի բոլոր խաղաթղթերը եւ արագացրեց նրա պաշտոնաթողությունը:

Նուրի ալ Մալիքին երկրի փաստորեն միահեծան կառավարիչն էր 2011-ից, երբ ամերիկյան զորքը հեռացավ Իրաքից: Վերջին երեք տարիներին սրված էին նրա հարաբերությունները սուննիների հետ, որոնք կազմում են Իրաքի բնակչության 1/3-ը: Ալ Մալիքին սուննիներին քանիցս անվանել է ահաբեկիչներ եւ դաժանորեն ճնշել է նրանց բողոքի ցույցերը: Դրա հետեւանքով սուննիներից շատերն անցան հակառակորդի ճամբար: Վատ էին ալ Մալիքիի հարաբերությունները նաեւ քրդերի եւ նույնիսկ իր դավանակից շիաների հետ: Բանը հասավ այնտեղ, որ վարչապետի քաղաքականությունը դատապարտեց Իրաքի Մեծ այաթոլլահ Ալի ալ Սիստանին:

Եվ երբ իսլամիստ գրոհայինները հյուսիսից շարժվեցին դեպի Բաղդադ՝ ալ Մալիքին այլեւս հենարան չուներ: Սուննիներից շատերը հաճույքով օգնում էին եւ այժմ էլ օգնում են գրոհայիններին, իսկ քրդերը, առիթից օգտվելով՝ իրենց վերահսկողության տակ առան նավթառատ Կիրկուկը եւ մի քանի այլ քաղաքներ:

Ամեն կողմից պահանջում էին վարչապետի հրաժարականը: Օգոստոսի 11-ին Իրաքի նախագահ Ֆուադ Մասումը նոր կառավարության ձեւավորումը հանձնարարեց ոչ թե ալ Մալիքիին՝ «Դավա» խոշորագույն կուսակցության առաջնորդին, այլ նրա կուսակից Հայդեր ալ Աբադիին:

Վերջինս հարմար թեկնածու է Իրաքի արտաքին ու ներքին քաղաքականությանը մասնակից բոլոր ուժերի համար: Մասնավորապես ԱՄՆ-ը վերջերս դժգոհ էր ալ Մալիքիի քաղաքական գծից եւ փոխարինող էր փնտրում: WikiLeaks կայքէջում հրապարակված դիվանագիտական հեռագրերից երեւում է, որ ամերիկացիները վաղուց աչքի առաջ են ունեցել ալ Աբադիին: Դեռ 2010 թ. ընտրություններից առաջ ԱՄՆ դեսպանությունը հաղորդել էր. «Հայդեր ալ Աբադին խորհրդարանում սակավաթիվ պատրաստված տնտեսագետներից մեկն է... Նա վճռականորեն պաշտպանում է տնտեսական բարեփոխումները եւ հակակոռուպցիոն պայքարի ջանքերը»:

Նոր վարչապետ Հայդեր ալ Աբադին ունի այնպիսի կենսագրություն, որը բնորոշում է Իրաքի ներկայիս վերնախավի ներկայացուցիչներից շատերին: Նա բավական բարձր դիրք է զբաղեցրել նախորդ վարչակազմում, տարագրվել Սադդամ Հուսեյնի օրոք, վերադառնալուց հետո աշխատել է նոր վարչակազմում: Ծնվել է բժշկի՝ առողջապահության նախարարության գլխավոր տեսուչի ընտանիքում: 15 տարեկանում անդամակցել է «Դավա» կուսակցությանը՝ որպես շիա պահպանողական: 1975 թ. ավարտել է Իրաքի Տեխնոլոգիական համալսարանը եւ ապա ուսումը շարունակել է Մեծ Բրիտանիայում: 1980-ին ավարտել է Մանչեստրի համալսարանը՝ էլեկտրոնային ճարտարագիտության գծով: Իսկ Իրաքում բաաստականները հակակառավարական գործունեության համար մահապատժի ենթարկեցին նրա երկու եղբայրներին, երրորդին էլ տասը տարով բանտարկեցին: Ալ Աբադիի իրաքյան անձնագիրը ճանաչվեց անվավեր, եւ նա մնաց Մեծ Բրիտանիայում, զբաղվեց տրանսպորտային նախագծմամբ եւ ապա հիմնեց վերելակների նորոգման ու սպասարկման սեփական ֆիրմա: Ալ Աբադիի նախկին դասախոսներից մեկի խոսքերով՝ նա օժտված է ամենատարբեր մարդկանց հետ ընդհանուր լեզու գտնելու զարմանալի ձիրքով:

Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո Իրաք վերադարձած ալ Աբադին բրիտանացի բարեկամների օգնությամբ դարձավ կապի եւ հաղորդակցությունների նախարար, իսկ 2005-ին զբաղեցրեց վարչապետի խորհրդականի պաշտոնը: Նույն թվականին սկսեց գլխավորել տնտեսության, ներդրումների եւ վերակառուցման հանձնախումբը: Արեւմուտքի գործընկերների հետ բանակցելիս ալ Աբադին իրեն դրսեւորել է որպես անզիջում հայրենասեր. մասնավորապես նա մերժում էր պետական ընկերությունների սեփականաշնորհումը, պահանջում էր բջջային օպերատորների արտոնագրերի հանձնման վերահսկողություն: 2010 թվականին նա մեկն էր իրաքցի սակավաթիվ քաղաքական գործիչներից, որոնք դասական հայցով ամերիկյան «Բլեքուոթեր» ռազմական ընկերությանը մեղադրեցին 17 խաղաղ իրաքցիների սպանության մեջ:

Ալ Աբադիի նշանակումը դրականորեն գնահատեցին ԱՄՆ-ը, Եվրոմիությունը, ՄԱԿ-ը, Արաբական պետությունների լիգան, Իրանը, Սաուդյան Արաբիան եւ Թուրքիան, որոնք բոլորն էլ մեծ դերակատարություն ունեն Մերձավոր Արեւելքում: Նորանշանակ վարչապետը պարտավոր է կառավարություն կազմել մինչեւ սեպտեմբերի կեսը: Ալ Աբադիի դրական կողմերից մեկը հանդուրժողական վերաբերմունքն է սուննիների հանդեպ: Դրա շնորհիվ նա կարող է ստանալ սուննի կրոնական գործիչների եւ ցեղապետերի աջակցությունը: Սակայն վարչապետի առջեւ ծառացած գլխավոր խնդիրը Իրաքի մասնատման կասեցումն է եւ երկրի հյուսիսում արմատական իսլամիստների ջախջախումը: Նոր վարչապետի խոսքերով՝ դա հնարավոր է անել Արեւմուտքի եւ Իրանի օգնությամբ: Անչափ կարեւոր է նաեւ ներքին աջակցությունը: Հայդեր ալ Աբադին հաջողության կհասնի, եթե կարողանա միավորել Իրաքի հասարակությունը, ստանալ քրդերի եւ սուննիների աջակցությունը, եթե ԱՄՆ-ին եւ Եվրոմիությանը համոզի, որ ինքը պատրաստ է վարել արեւմտամետ գիծ, Թեհրանին էլ համոզի, թե պատրաստ է հարգել Իրանի շահերը, իսկ սեփական երկրի քաղաքացիներին՝ թե բոլոր միջոցներով կպաշտպանի պետության շահերը: Հակառակ դեպքում ալ Աբադին կարող է պատմության մեջ մտնել որպես Իրաքի Հանրապետության վերջին վարչապետ:

**Պ. Ք.**

# Վերջին տեղեկություններ Իրաքյան Քուրդիստանից

## Մուսուլից փախստական 65 հայ ընտանիք ցանկանում է մշտապես հանգրվանել Մայր հայրենիքում

**Իրաքում եւ Իրաքյան Քուրդիստանում տեղի ունեցող ահավոր իրադարձությունները, հալածանքներն ու կոտորածները, եղեռնագործությունները Արեւմուտքի երբեմնի «ձեռնասուն» Իսլամական ծայրահեղական «ԴԱՀԷՇ»ի (ISIS) կողմից՝ ցնցել է աշխարհը: Այս եւ նախորդ տարի բազմիցս լինելով Էրբիլում, Դհոկում, Զախոյում, հայկական Ավզրուկ եւ Հավրեզ ավաններում, ինձ հիացրել էր այն մեծ հարգանքն ու պատիվը, որ վայելում էին հայկական ծաղկուն գաղ-**

Տեր Առաքել Գասպարյան

**թօջախի որդիներն ու դուստրերը Հյուսիսային Իրաքում: Իրաքի խորհրդարանի պատգամավոր, «փեշմերգա» Արամ Շահին Բակոյանը, նշանավոր ճարտարապետ Երվանդ Ամինյանը, արքանյակային հեռարձակմամբ եռալեզու «Իշտար» հեռուստաընկերության տնօրեն Ռազմիկ Մուրադյանը, Էրբիլի հայոց կառուցվող փառավոր եկեղեցու՝ կառուցման նախաձեռնող եւ հայ գաղթօջախի ղեկավար Շանթ Մուրադյանը պատմում էին, թե ինչպես Քուրդիստանի նախագահ Մեսուդ Բարզանին 5 միլիոն դոլար էր նվիրել, որպեսզի Իրաքից փախստական հայերը ունենան իրենց հոգեւոր տաճարը եւ տունը մայրաքաղաք Էրբիլում: Ամենուրեք տեսնում էինք նախկին փոխ-վարչապետ եւ էկոնոմիկայի նախարար Սարգիս Աղաջանի կառուցած հրաշալի ավաններն ու գյուղերը, հայերի եւ քրիստոնյաների, եզդիների ու քրդերի համար:**

**Մեր վերջին հանդիպումը սակայն Մուսուլի հայ եկեղեցու հոգեւոր հովիվ, հրաքյան բանակի նախկին բժշկական պատ Տեր Առաքել Գասպարյանի հետ՝ տխուր խոհերի մեջ թողեց բոլորիս: «ԴԱՀԷՇ»ական գազանները հարձակվել էին (ինչպես 1915ին թուրքերն ու քուրդերը) հայերի եւ մյուս քրիստոնյաների թաղամասերի վրա, կողոպտել եւ սպանել, գեղեցիկ կանանց ու երեխաներին գերեվարել եւ վաճառքի հանել որպես հարճեր եւ ստրուկներ՝ իրենց կողմից զավթված հրաքյան եւ սիրիական տարածքներում: Ստիպել էին քրիստոնյաներին կրոնափոխ դառնալ կամ գլխահարկ վճարել ու սրահատման սպառնալիքով լքել իրենց տներն ու կալվածները, որտեղ նրանք ապրել էին տասնամյակներ, նույնիսկ... դարեր շարունակ: Տեր Առաքելին հաջողվել էր Մուսուլի վրա «ԴԱՀԷՇ»ական բորենիների հարձակվելուց ընդամենը մի քանի ժամ առաջ 65 հայ ընտանիքներին անվնաս հեռացնել քաղաքից ու տեղավորել Էրբիլի, Դհոկի, Զախոյի, Ավզրուկի, Հավրեզի հայոց տներում, եկեղեցիներում:**

**Մի քանի օր առաջ, արեւմտյան պետությունների անտարբեր աչքերի եւ ցինիկ վերաբերմունքի դիմաց, մանավանդ որ մասնակցել էին ԱՄՆ-ի ու ՆԱՏՕ-ի կողմից Իրաքի զավթմանն ու թալանմանը, այս անգամ Իրաքի նոր «խալիֆաս»ի զորքերը հարձակվեցին քրիստոնեական մեծագույն ավան Ղարաղոշի եւ շրջակա գյուղերի վրա, ինչպես «Աղաջանյան»ի, միաժամանակ՝ ուղղակի ցեղասպանություն գործադրելով հայ ժողովրդի բարեկամ ու դաշնակից եզդիների վրա: Դարձյալ հազարավոր գաղթական-փախստականներ, Էրբիլի քրիստոնեական արվարձան Անկավայում, ուր եկեղեցիները, վանքերն ու դպրոցները տրամադրվել էին ամեն ինչ կորցրած հայ, ասորի, քաղդեական, եզդի, թուրքմեն քաղաքացիների:**

**Ի վերջո, վախենալով թե իրենց կենսական շահերը Հյուսիսային Իրաքում կարող են վտանգվել իսլամական ծայրահեղականների կողմից, մանավանդ որ մարդկային ողբերգության մանրամասները տարածվել էին զանգվածային լրատվամիջոցներով, ԱՄՆ-ի ռազմական ինքնաթիռները արդեն մեկ շաբաթ գրեթե ամեն օր օդային ռմբահարումներով փորձում են հավասարակշռել իրավիճակը, հումանիտար օգնություն հասցնել օդից, սակայն դեռեւս առանց հստակ ծրագրի, թե ի՞նչ է լինելու բյուրավոր գաղթականների ապագան, եւ ո՞վ է ջախջախելու մինչեւ ատամները զինված, Արեւմուտքի գաղտնի օգնություններով եւ նաֆթի անհատնում եկամուտներով «սնուցվող» այդ մարդակերպ գազանները:**

**- «Մենք ձեզնից խնդրում ենք կապվել Հայաստանի կառավարության հետ, որպեսզի կազմակերպվի Մուսուլի 65 հայ փախստական ընտանիքների մշտական բնակությունը Մայր հայրենիքում»,- անցած գիշեր Էրբիլից հեռախոսով հայտնեց մեր ժամանակների «Ղեւոնդ Երեց» Տեր Առաքել Գասպարյանը:**

**Հուսով ենք, որ արդեն իսկ ձեռնարկված անհրաժեշտ քայլերն ու կապերը ի վերջո հրաքյան նորագույն դժոխքից կփրկեն նաեւ մեր հարազատ եղբայրներին ու քույրերին, որոնք այսօր, հակառակ Իրաքի Հայոց հոգեւոր առաջնորդ Ավագ Սրբազանի, Իրաքյան Քուրդիստանի հազար կարիքի մեջ գտնվող պետության օժանդակության, ի վերջո հայրենադարձվելու են Հայաստան՝ իրենց նոր կյանքը ստեղծելու Մայրենի հողում:**

**ՀԱՄՈ ՄՈՄԿՈՓՅԱՆ**
**Քեյրութ, 17.08.14 թ.**

AZG NEW SHABAT.QXD 21/08/2014 22:44 Page 10



## ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

# ISIS-ը նաեւ հակախալամն է

Անցնող յունիսէն ի վեր Իրաքի մէջ մեծ հողատարածքներ գրաւած ISIS շարժումին («Իրաքի եւ Շամի Իսլամական Տէրութիւն», որ աւելի ուշ վերակոչուեցաւ «Իսլամական Խալիֆայութիւն») «ասողը» փայլեցաւ «Ալ Ղաիդա» շարժումի առաջնորդ 54 տարեկան Ուսամա Բըն Լադէնի ֆիզիկական լուծարումէն ետ (2 մայիս 2011): Այդ օրերուն ոչ ոք գիտէր, թէ ինչ է ISIS-ը, որուն անունը առաջին անգամ լսելի դարձաւ ոչ թէ Իրաքի, այլ Սուրիոյ մէջ: Սուրիական սիւննի մեծամասնութիւն ունեցող Ռաքքա քաղաքը դարձաւ շարժումին գլխաւոր կեդրոնատեղին: Շարժումը, որ Սուրիոյ տարբեր ճակատներուն վրայ մասնաւորաբար կռուեցաւ Սուրիոյ այլ ընդդիմադիր ջոկատներուն դէմ, անցեալ 10 յունիսին անսպասելի եւ արագ գործողութեամբ մը իր ժանիքները տարածեց Իրաքի Մուսուլ, Նինուէ եւ Թիքրիթ շրջաններուն վրայ:

Գլխաւորաբար սիւննի իսլամներէ բաղկացած զինեալներուն հարուածները անցեալ յունիսին կազմած են 27 Միլիոն եւրո եւ ըստ լիբանանեան «Ալ Սաֆիր» թերթի յօդուածագիր Ալի Այաշին այդ փոխանցումները կը կատարուին միջազգային դրամական (World Bank) հովանիին տակ գործող Swift համակարգին միջոցաւ:

ԱՄՆ-ի գործող ղեկավարութեան համար համար ներկայ հանգրուանին անփոխարինելի է «վերակառուցող քաոս» հանգանակը այնքան ժամանակ, որ այդ մօտեցումին փոխարինող ձեւաչափ չկայ: Այս մօտեցումը նաեւ կը կիրառուի յարմարագոյն գիներով նաւթի պաշարներու տիրացման համար: Նոյն քաղաքականութեամբ ԱՄՆ սիննի-շիիթ ատելութեան խաղարտը Իրանի հետ բանակցութեան սեղանին իբրեւ նոր ճնշման միջոց կ՚օգտագործէ:

Սոյն հաշուարկներուն դիմաց զոհերուն թիւը ոչ մէկ նշանակութիւն ունի: Ձերօ է մարդկային վարկանիշին թիւը: Ցաւօք, ինչքան արիւն կը թափուի՝ այդքան կը դիւրանայ քաղաքական ծրագրին իրականացումը:

Ողբերգականը սակայն Արեւելքի քրիստոնեաներուն բարձրագոյն ղեկավարութեան խօսելու ձեւն է: Անոնք տակաւին կը հաւատան, որ կաթոլիկ եկեղեցւոյ հիմնադիր առաքեալներուն լեզուով պիտի խօսին: Այսինքն արեան դիմաց պէտք է աղօթել: Արեան դիմաց գեղեցիկ հանդերձանքով պատարագներ կատարել եւ ուրաճմլիկ քարոզներ կարդալ:

Իրաքի «Ալ Ղաֆիդին» (Իրաքեան խորհրդրանի քրիստոնեայ Բլոք) խմբակցութեան նախագահ Եոնադիմ Քաննա, ամիսներ առաջ Լիբանան այցելելով հանդիպումներ ունեցած է Լիբանանի քրիստոնեայ (հիմնականին մէջ մարոնիթ) ղեկավարներուն հետ եւ իրազեկելով ընդհանուր իրավիճակը՝ վերադարձած է ձեռնունայն: Այս ճիգին դիմաց քրիստոնեաներուն այսօրուան լացը պէտք է կոկորդիլոսի արցունք համարել: Երբ վտանգը եւ արեան հոտը մեր քիթերուն մէջ է, ինչ կը նշանակէ արեան հեղեղին առջեւ ձեռնածալ մնալ: Քրիստոնէական ո՞ր մատեանին մէջ գրուած է ասիկա:

Քաղաքական գետին վերադառնալով պէտք է արձանագրել, որ Նուրի ալ Մալիքիի իշխանութիւնէն հեռանալը կը նշանակէ, որ Իրաքի մէջ նոր հանգրուան մը բացուած է: Պէտք է նաեւ ընդգծել, որ սիւննի աշխարհին ամէնէն ազդեցիկ երկրին՝ Սէուդական Արաբիոյ համար ընդունելի չեն իսլամին անունով Իրաքի մէջ (եւ ոչ միայն Իրաքի)

մար կարմիր գիծեր գոյութիւն չունին: Խաղի կանոններ գրեթէ չկան: Խալիֆայութեան վերածուած շարժումին համար խիղճ, սկզբունք, իսլամական կրօնի յատուկ գաղափարտութեան օրէնքները չեն գործեր: Այս մօտեցումներով է, որ անոնք դասարկեցին Մուսուլը եւ Սինճար լեռան վրայ պաշարեցին եզիտիները: Անոնք իսլամութիւնը պարտադրելու սպառնալիքը գործի մղելով հարիւրաւոր մարդոց «գլուխը կերան»:

Այս վերջը անդարմանելի է: Ու ինչքան ալ խօսուի, որ քրիստոնեաները կրնան ետ Մուսուլ վերադառնալ, գոնէ այս հանգրուանին երազային է: Հոն կատարուած ողբերգութիւնները գրիչի մէկ հարուածով չեն սրբագրուիր: Նոյնը կը վերաբերի եզիտիներուն, որոնց մասին արդէն տեղեկութիւններ շրջան կ՚ընեն, որ արդէն սկսած են հասնիլ Վրաստան (այս մասին գրած է Rudwa.net կայքը):

ISIS-ի պատմութիւնը նոր չէ, ու այս խնդիրներով հետաքրքրուողին համար պարզ կը դառնայ, որ շարժումը ստեղծուած է շուրջ եօթը տարի առաջ որպէս հիմք ունենալով «Ալ Ղաիդա» շարժումէն հեռացած սարրեր, որոնց նիւթական պէտքերը տրամադրուած են իսլամ մեծահարուստներու կողմէ: Միջազգային դրամական համակարգին վրայ կարեւորագոյն ազդեցութիւն ունեցող ԱՄՆ-ի քթին տակ եղած նիւթական փոխանցումները (նկատի ունիմ եւրոպական երկիրներէ դէպի Իրաք փոխանցուող գումարները) անցեալ յունիսին կազմած են 27 Միլիոն եւրո եւ ըստ լիբանանեան «Ալ Սաֆիր» թերթի յօդուածագիր Ալի Այաշին այդ փոխանցումները կը կատարուին միջազգային դրամական (World Bank) հովանիին տակ գործող Swift համակարգին միջոցաւ:

ԱՄՆ-ի գործող ղեկավարութեան համար համար ներկայ հանգրուանին անփոխարինելի է «վերակառուցող քաոս» հանգանակը այնքան ժամանակ, որ այդ մօտեցումին փոխարինող ձեւաչափ չկայ: Այս մօտեցումը նաեւ կը կիրառուի յարմարագոյն գիներով նաւթի պաշարներու տիրացման համար: Նոյն քաղաքականութեամբ ԱՄՆ սիննի-շիիթ ատելութեան խաղարտը Իրանի հետ բանակցութեան սեղանին իբրեւ նոր ճնշման միջոց կ՚օգտագործէ:

Սոյն հաշուարկներուն դիմաց զոհերուն թիւը ոչ մէկ նշանակութիւն ունի: Ձերօ է մարդկային վարկանիշին թիւը: Ցաւօք, ինչքան արիւն կը թափուի՝ այդքան կը դիւրանայ քաղաքական ծրագրին իրականացումը:

Ողբերգականը սակայն Արեւելքի քրիստոնեաներուն բարձրագոյն ղեկավարութեան խօսելու ձեւն է: Անոնք տակաւին կը հաւատան, որ կաթոլիկ եկեղեցւոյ հիմնադիր առաքեալներուն լեզուով պիտի խօսին: Այսինքն արեան դիմաց գեղեցիկ հանդերձանքով պատարագներ կատարել եւ ուրաճմլիկ քարոզներ կարդալ:

Իրաքի «Ալ Ղաֆիդին» (Իրաքեան խորհրդրանի քրիստոնեայ Բլոք) խմբակցութեան նախագահ Եոնադիմ Քաննա, ամիսներ առաջ Լիբանան այցելելով հանդիպումներ ունեցած է Լիբանանի քրիստոնեայ (հիմնականին մէջ մարոնիթ) ղեկավարներուն հետ եւ իրազեկելով ընդհանուր իրավիճակը՝ վերադարձած է ձեռնունայն: Այս ճիգին դիմաց քրիստոնեաներուն այսօրուան լացը պէտք է կոկորդիլոսի արցունք համարել: Երբ վտանգը եւ արեան հոտը մեր քիթերուն մէջ է, ինչ կը նշանակէ արեան հեղեղին առջեւ ձեռնածալ մնալ: Քրիստոնէական ո՞ր մատեանին մէջ գրուած է ասիկա:

Քաղաքական գետին վերադառնալով պէտք է արձանագրել, որ Նուրի ալ Մալիքիի իշխանութիւնէն հեռանալը կը նշանակէ, որ Իրաքի մէջ նոր հանգրուան մը բացուած է: Պէտք է նաեւ ընդգծել, որ սիւննի աշխարհին ամէնէն ազդեցիկ երկրին՝ Սէուդական Արաբիոյ համար ընդունելի չեն իսլամին անունով Իրաքի մէջ (եւ ոչ միայն Իրաքի)

## Բիթլիսի մասին՝ Ֆրեզնոյի պետհամալսարանում

**«Ֆրեզնոյի հայերի սրտերում եւ հոգիներում Բիթլիսը յուրահատուկ տեղ է զբաղեցնում: Այն ոչ միայն մեծանուն բարի հսկայի՝ Վիլյամ Սարոյանի ծննդավայրն էր, այլեւ բազմաթիվ հայ գաղթականների, որոնք Ցեղասպանությունից հետո հաստատվեցին Ֆրեզնոյում», գրում է Դենիզ Ալթունյանը «Հայ Շարժում» պարբերականում, որտեղից «Արմինյն Միրոր-Սփեթեյթր» շաբաթաթերթը արտատպել է հոդվածը:**

**Վերջին ամիսներին, ըստ Ա. Թունյանի լրատվության, նոր լույս է սփռվել այդ քաղաքի պատմության եւ հայերի ունեցած ազդեցության վրա, շնորհիվ լոնդոնյան «Կոմիտաս ինստիտուտի» տնօրեն Արա Սարաֆյանի նախաձեռնած ծրագրի, որը փորձում է կապեր հաստատել հայերի, թուրքերի եւ քուրդերի միջեւ: Պրոֆեսոր Բարլոու Տեր-Մկրտիչյանի եւ Հայկական ուսումնասիրությունների ծրագրի աջակցությամբ Սարաֆյանը Ֆրեզնոյի պետհամալսարանի Հենրի Մադդենի անվան գրադարանում բացել է «Վերհիշելով Բիթլիսի հայերին» խորագրով լուսանկարների ցուցահանդեսը, որտեղ ներկայացված են եղել մինչ օրս անհայտ լուսանկարներ այդ քաղաքի հայերի կյանքից, ինչպես նաեւ ազգագրական եւ ժողովրդագրական քարտեզներ, որոնք վկայում են, որ հայերն ու քուրդերը Բիթլիսում եւ Վանում մեծամասնություն են կազմել:**

**Սարաֆյանը անցյալ տարի Բիթլիսի բնակիչների շրջանում հանդիպումներ է ունեցել եւ ուսումնասիրություններ կատարել օսմանյան, հայկական եւ ռուսական արխիվներում, որոնց արդյունքում այս տարվա մարտ ամսին «Բիթլիս Էրմենիլերի» (Բիթլիսի հայերը) խորագրով ցուցահանդես է կազմակերպել Տատվանում (Թուրքիա)՝ Վանի ափերի մոտ, որը մեծ հետաքրքրություն է առաջացրել հատկապես քուրդերի շրջանում:**

**Ֆրեզնոյում ցուցահանդեսի օրերին Սարաֆյանը հանդես է եկել նաեւ դասախոսությամբ:**

**Հ. Ծ.**

## Այնշթայնները երջանկություն որոնելիս

**Երբ ասում ենք Այնշթայն, միանգամից մտաբերում ենք դեռ դպրոցից հայտնի՝ Հարաբերականության տեսություն, տարածություն, ժամանակ, սեւ խոռոչ հասկացությունները, իսկ այն, որ հանճարի որդին տառապել է հոգեբուժարանում, որ խնամատարին հանձնված նորածին դուստրը մահացել է վաղաժամ, դրա մասին դասագրքերում տող անգամ չկա:**

**«Էդուարդ Այնշթայնի անկումը» վերնագիրն է կրում բեսթսելլերների հեղինակ ֆրանսագիր Լաուրենթ Սեկսիկի նոր վեպը, որ հանճարեղ ֆիզիկոս Ալբերտ Այնշթայնի շիզոֆրենիայով տառապող որդու՝ Էդուարդի մասին է: Գերմանական «Շպեռն» հանդեսն իր մայիսվերջյան համարում Քերսթին Հերրնհինդի հեղինակած «Այնշթայնի գաղտնիքը» վերնագրյալ հոդվածում անդրադառնում է գրքի գերմաներեն 336 էջանոց թարգմանությանը:**

**Երբ 1910-ին Միլեւա Այնշթայնը լույս աշխարհ բերեց Էդուարդին, նրա ամուսինը զբաղված էր այլ նշանակալի գործով՝ Հալեի գիսաստղն առավել կարեւոր էր, քան Ցյուրիխում ծնված լացկան փոքրիկը, գրում է հեղինակը՝ Էդուարդի դառնությունը նկարագրելով ու ընթերցողին փոխանցելով:Հայրն անընդհատ զբաղված էր, անընդհատ կողքին չէր, իսկ երբ նույնիսկ տանն էր, բազմոցին նստած, աղա այնպես էր վարվում, ասես այդ տարածքը գրավյալ իր երկիրն է, ինքը՝ տեր, տանը երկրաբարժ էր՝ առավոտից իրիկուն, լուրջ պատճառ չկար, նվազ մի առիթ էր պետք, որ կնոջ ու երեխաների հետ դյուրաբեկ խաղաղությունը փշրվեր: Երբ Էդուարդը 4 տարեկան էր, ծնողները բաժանվեցին: Նա մոր ու եղբոր հետ Ցյուրիխ տեղափոխվեց, հորը տարիներով չէր տեսնում: Իսկ հայրը ոչ միայն զույգ որդիներին էր միայնակ թողել, այլեւ՝ Միլեւայի հետ հարսանիքից առաջ ծնված դստերը՝ Լիզերլին աղքատ լինելու պատճառաբանությամբ հանձնել էր ուրիշի խնամատարության: Դուստրը երկար չէր ապրել: Էդուարդը 20 տարեկան էր, երբ հիվանդացավ շիզոֆրենիայով: Համոզված էր, որ կարող էր թռչել, կամենում էր «Ցյուրիխի գիսաստղը» լինել: Ինչ-որ տեղ գերխելացի հորն հակազդելու տարբերակ էր գտել: Ալբերտ Այնշթայնը, որ արդեն Նոբելյան մրցանակակիր էր եւ նացիների հետապնդումների պատճառով ապաստանել էր ԱՄՆ-ում, միայն մի անգամ եկավ հոգեբուժարան՝ Էդուարդին այցելելու: «Ինչո՞ւ հենց իր որդին պիտի խելագարվի» միտքը հանգիստ չէր տալիս ֆիզիկոսին, իսկ նա հարցին մի պարզ բացատրություն ուներ՝ գենն է մեղավոր, իր կնո՛ջ գենը:**

**Սեկսիկը դատավորի դերում հանդես չի գալիս, գրում է «Շպեռնի» մեկնաբանը, նա մերթ որդու, մերթ հոր, մերթ մոր հոգում կատարվող տուրեւառությունների փոխանցողն է, նա գրողի իր երեւակայական միտքն այնքան լավ է հունցում փաստերին, որ վեպի ավարտին Այնշթայնն առավել կենդանի է դառնում, քան շատ կենսագրականներից է պարզ ուրվագծվում: Առաջին հերթին այն, որ տիեզերքի ամբողջականության, միասնականության գաղտնիքն հասցրել էր յուրացնել, իսկ ներտիեզերական իր ամբողջականությունը ճաքեր էր տվել, կամ ինչպես Էդուարդն է ձեւակերպում՝ «երջանկության բանաձեւը թվերի մեջ չես գտնի»:**

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**
**Գերմանիա**

AZG NEW SHABAT.QXD 21/08/2014 22:44 Page 11



# Ինտերպոլը փնտրում է Ղազախստանից փախած օլիգարխի

**ՌՈՒԴՈԼՖ ԱՎԱՆԵՍՅԱՆ**

- Բիզնեսի համար ինձ փող տվել է մայրս,- այսպես էր ասում որոշ ժամանակ առաջ իր հարցազրույցում Շվեյցարիայից գործարար Իլյաս Խրապունովը, իսկ այսօր նա արդեն հետախուզման մեջ է Ինտերպոլի կողմից: Ահա այսպիսի սրընթաց կարիերա՝ մամայի բալիկից եւ մայրի որդուց աճել մի քանի տարվա ընթացքում մինչեւ հանցագործ խմբավորման հաջողակ ղեկավար: Դրա համար, ինչպես գիտեք, անհրաժեշտ է հասուկ տաղանդ:

Մյուս կողմից կարելի է ասել, որ Իլյասի բախտը ուսուցիչների հարցում բերել է: Այն փողերը, որ նրան տալիս էր մայրը, որն անվանում էր իրեն հաջողակ գործարար-տիկին, գողացվել էին Ղազախստանի Հանրապետության Ալմա-Աթի քաղաքի բյուջեից հայրիկի օգնությամբ, որն այդ ղազախստանյան քաղաքում ամենագլխավոր պաշտոնյան էր:

Իլյասի անձի ձեւավորման գործում մեծ ներդրում է ունեցել փախած օլիգարխ Մուխտար Աբլիազովը, որի աղջկա հետ ամուսնացել էր այդ երբեմնի սուսուփուս եւ համեստ տղան: Մուխտարը հայտնի կերպար է «սպիտակ օձիքավոր» հանցագործների աշխարհում, որը դարձավ նրա համար ֆինանսական գուրու՝ անհրաժեշտ պահին օգնելով բարի խորհրդով եւ փողով: Ձկան պես կողմնորոշվելով օֆշորների պղտոր ջրերում՝ աները ցույց տվեց փեսային բարձրագույն պիլոտաժ, երբ դուրս բերեց բազմաթիվ միլիարդ տենգե արժեցող ակտիվները ղազախստանյան «ԲՏԱ» բանկից, ինչից հետո հաջողությամբ հեռացավ Լոնդոն:

Իլյասի ծնողները՝ պաշտոնյա հայրիկը եւ գործարար մայրիկը՝ Վիկտոր եւ Լեյլա Խրապունովները, իրենց հերթին տեղափոխվեցին Շվեյցարիա: Մոտիվը մեկն էր՝ ունենալով հոյակապ հոսառություն, Իլյասի աները եւ ծնողները լքեցին Ղազախստանը քրեական գործերի հարուցումից ոչ շատ առաջ:

Հետաքրքիր է, որ դա տեղի է ունեցել համարյա միաժամանակ 2008 եւ 2009թթ. եւ հնարավոր քրեական հետաքննդումից պաշտպանության գիծն ընտրեցին ընդհանուր: Այդ պատճառով էլ, երբ Ղազախստանը հեռակա կարգով այդ մարդկանց դատապարտեց երկարաժամկետ բանտարկության, իսկ հետո Ինտերպոլը հայտարարեց միջազգային հետախուզում, իրավապահ համակարգը անօգնական դուրս եկավ: Գործին միջամտեց քաղաքականությունը:

Ամեն ինչ սկսվեց Աբլիազովից, որը Մեծ Բրիտանիայում ստացավ քաղաքական վտարանդիի կարգավիճակ: Տիրապետելով զարգացած եւ հարուստ երեւակայության՝ նա կառուցեց վիրտուալ իրականություն, որը ոչ մի կապ չունի իրական Ղազախստանի հետ: Այդ իրականության մեջ նա իրեն էր հասկացրել արտասովոր ազգային առաջնորդի դերը, որին հետապնդում են իշխանությունները, իր դեմ սարքելով քրեական գործեր, որպեսզի ազատվեն մրցակցից:

Աբլիազովը, հասկանալով, որ կեղծ խոսքը ատրճանակից ավելի սարսափելի է, ծավալեց ակտիվ տեղեկատվական պատերազմ: Եվ ինչը ամենահետաքրքրականն է, նրան սկզբում հավատում էին:

Անգլիացիները, իհարկե, հասունացան, բայց ավելի ուշ: Հանել վարդագույն ակնոցներն օգնեց «ԲՏԱ» բանկի հայցով դատական գործընթացը, որը ցույց տվեց Աբլիազովի մեղքը մի քանի միլիարդ դոլարի գողության մեջ: Այդ գործը, ձգձգված եւ ծայրահեղ խճճված օլիգարխն այնուամենայնիվ խայտառակ կերպով պարտվեց: Ահա այդ ժամանակ էլ անգլիացիները մտածեցին, թե ո՞ւմ են մեք, ըստ էության, հովանավորում: Չէ՞ որ նա հանցագործ է: Եվ ինչն է հատկանշական նույնիսկ քաղաքացիական դատավարության շրջանակներում՝ պերմանենտ ստի եւ ֆեմիդային դիմակայելու փորձերի համար Աբլիազովը դատապարտվեց 22 ամսվա բանտարկության:

Դրանից հետո արդեն անգլիացիներն էլ վատը դարձան եւ Աբլիազովը կրկին փոխեց բնակության վայրը: Անցնելով ընդհատակյա գոյության՝ նա Լոնդոնի Բարձր Դատարանին մեղադրեց քաղաքական կողմնապահության մեջ Ասանայի օգտին, իբր բացահայտեց գործարքի եւ կոռուպցիայի մեջ: Ընդհանուր առմամբ, նա իրեն պահում էր ինչպես միշտ: Հռետորաբանության այդ շատրվանը հնարավոր չէր կասեցնել նույնիսկ այն ժամանակ, երբ հանցագործին բերման ենթարկեցին Երկնագույն ափին գտնվող իր առանձնատնից եւ բանտարկեցին Ֆրանսիայում: Նա այնտեղից էլ շարունակում էր հեռարձակել ամբողջ աշխարհին ոտնահարված իրավունքների եւ կամայականության մասին: Այսօր որոշվում է հանցագործի արտահանձնման հարցը: Ի միջի այլոց, անգլիացիները զրկեցին նրան քաղաքական վտարանդիի կարգավիճակից:

Խրապունովների ընտանիքը առաջին շրջանում իրեն շատ ավելի լուռ էր պահում: Իրեն զգացնել էր տալիս ժողովրդի համեստ ծառա Վիկտոր Խրապունովի բնավորությունը, որն այսպես էր մտածում. «փախցրել եմ, մեկնել եմ, եւ փառք Աստծո, ինչո՞ւ գրգռել չարին»: Սակայն Աբլիազովի տեղեկատվական պատերազմն ինչպես արագություն հավաքող շոգեքարշի անհագ վառարան փայտ էր պահանջում, եւ Վիկտոր Խրապունովը դարձավ այն գերանը, որն այսօր էլ Աբլիազովի ձերբակալությունից հետո դեռ շարունակում է ծխալ եւ չի օգոնանում քաղաքական մթնոլորտում: Լեյլան նույնպես իր ներդրումն ունի ծխածածկույթի ստեղծման գործում՝ օգնելով փախցնել եվրոպական հանրության աչքերը: Ընդսմին, նաեւ Խրապունովների կլանի վրա սկսեցին մթագնել ամպերը:

Որոշ ժամանակ առաջ Ժնեւի դատախազությունը հետաքննություն սկսեց՝ կասկածելով Խրապունովների ընտանիքը փողերի լվացման մեջ: Բոլոր նրանց հաշիվները Credit Suisse եւ Schroder & Co Bank AG սառեցվեցին, իսկ բոլոր փաստաթղթերը՝ առգրավվեցին: Ըստ երեւույթին վախենալով իրենց ապագայի համար՝ Խրապունովների-Աբլիազովների կլանը որոշեց տեղափոխվել օվկիանոսից այն կողմ: Սակայն ղազախստանյան իշխանություններն անմիջապես դիմեցին ամերիկյան Կալիֆորնիա նահանգի դատարան՝ քաղաքի նախկին ղեկավարի դեմ, մեղադրելով նրան 300 միլիոն ԱՄՆ դոլար հափշտակելու մեջ: Համաձայն գործի նյութերի, Խրապունովի զավակներն իրենց կանանց հետ միասին օգտագործել են հափշտակված միջոցները Լոս Անջելեսի շրջաններում անշարժ գույք ձեռք բերելու համար, այդ թվում 6,2 միլիոն դոլար Բեւերլի Հիլզում տուն գնելու եւ 5,7 միլիոն դոլար Ստուդիո Սիթիում երկու ակր հող գնելու: Բացի դրանից նրանք լիզինգով ձեռք են բերել Ռոլս Ռոյս եւ Բենթլի շքեղ ավտոմեքենաներ: Ի՞նչ կարող ես ասել: Լավն էին Իլյաս Խրապունովի ուսուցիչները, եւ զարմանալի չէ, որ նա շարունակեց ընտանեկան ավանդույթը, իր անձնական էջը բացելով Ինտերպոլի կայքում «փնտրվում է» բաժնում:

Ինչպես հաղորդվում է, 30-ամյա Իլյասը կասկածվում է կազմակերպված հանցավոր խումբ ստեղծելու եւ ղեկավարելու, հանցագործ խմբավորմանը մասնակցելու, ինչպես նաեւ անօրինական ճանապարհով ձեռք բերված դրամական միջոցներ կամ այլ գույք լեգալացնելու գործում:

«Ինտերպոլը խնդրում է բոլորին, ով տիրապետում է տեղեկությունների Իլյաս Խրապունովի գտնվելու մասին, դիմել գերատեսչությանը», ասվում է միջազգային ոստիկանական կազմակերպության կայքում:

Ինչեւէ, Ինտերպոլը փնտրում էր եւ նրա ծնողներին, ինչը չէր խանգարում նրանց ապրել ակտիվ կյանքով Շվեյցարիայի կանտոններից մեկում, լայն հասարակայնությանը հայտնի հասցեով: Բայց սա արդեն հարց է, որն ուղղված է եվրոպական իրավապահներին: Քանի որ այդ մարդկանց հասցեին հնչում են այսքան լուրջ պահանջներ, դրանք պարզապես մի կողմ հրելը անթույլատրելի թողտվություն է: Պետք է ինչ-որ բան անել. կա՛մ արտահանձնել փնտրվողներին, կա՛մ վարել սեփական հետաքննություն: Պետք է հստակ պատասխան տալ եվրոպական հասարակությանը. փարատել բոլոր կասկածները, թե Հին աշխարհը դառնում է օլիգարխների հավաքատեղի, որտեղ միլիոնանոց ներդրումների դիմաց նրանց համար գրվում են ինդուլգենցիաներ, որոնք թողություն են տալիս բոլոր նախկին մեղքերին: Դուք ուզո՞ւմ եք ուսուսի ապրել այդպիսի հարեւանների հետ: Ես՝ ոչ:

## Սիրիայի քիմիական զենքը լիովին ոչնչացված է

**Միջերկրական ծովում գտնվող ամերիկյան «Քեյփ Ռեյ» նավի վրա լիովին ոչնչացվել են Սիրիայի քիմիական զենքի վերջին պաշարները: Այդ մասին ՁԼՄ-ներին տեղեկացրել է Պենտագոնի պաշտոնական ներկայացուցիչ Ջոն Կիրբին:**

**ԱՄՆ պաշտպանության նախարար Չակ Հեյգելը նավաստիին եւ անձնակազմին շնորհավորել է «հայտագրված սիրիական զինանոցի ամենավտանգավոր քիմիական նյութերը ծովում չեզոքացնելու աննախադեպ աշխատանքի» ավարտման կապակցությամբ, պատմել է Պենտագոնի ներկայացուցիչը: Կիրբիի խոսքերով, ռազմական գերատեսչության ղեկավարը կատարված աշխատանքն անվանել է կարեւոր ավանդ համընդհանուր անվտանգության ապահովման գործում:**

**«Քեյն Ռեյի» վրա քիմիական զենքի ոչնչացման ավարտումը մեկնաբանել է ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման: Նա գործողության իրականացման մեջ ներդրած ավանդի համար շնորհակալություն է հայտնել Դանիային, Նորվեգիային, Իտալիային, Ֆինլանդիային, Գերմանիային եւ Մեծ Բրիտանիային: «Եվ մենք գնահատում ենք Ռուսաստանի ու Չինաստանի օգնությունը», ավելացրել է Օբաման:**

**Նախագահը նշել է, որ ԱՄՆ-ը կշարունակի հետեւել, թե Սիրիան ինչպես է կատարում քիմիական զենքի արտադրական կարողությունների ոչնչացման պարտավորությունները:**

**Սիրիան Ռուսաստանի ակտիվ միջնորդությամբ 2013 թ. սեպտեմբերին համաձայնել էր միանալ Քիմիական զենքի արգելման կոնվենցիային եւ ամբողջովին ոչնչացնել սեփական թունանյութերի զինանոցը: Երկրի իշխանություններն այդ քայլին դիմել էին ԱՄՆ-ի հարվածի սպառնալիքի պատճառով: Ամերիկացիները Դամասկոսին ամբաստանել էին 2013 թ. օգոստոսին զանգվածային բնաջնջման զենք կիրառած լինելու մեջ: Մինչդեռ պարզվել էր, որ Թուրքիայի գաղտնի ծառայությունների միջամտությամբ «քիմիական ռումբ» էր հայթայթվել նախագահ Ասադի հակառակորդներին, որոնք օգտագործել էին Դամասկոսի արվարձաններից մեկում, ԱՄՆ-ի օդային հոդվածների համար առիթ ստեղծելու նպատակով:**

**Քիմիական զինանոցի վերջին մասը Սիրիայից դուրս էր բերվել 2014 թ. հունիսի 23-ին, իսկ հուլիսի 7-ին Միջերկրական ծովում սկսվել էր դրա ոչնչացումը:**

## Էկվադորն ապաստան տրամադրեց Ասանժին

**Էկվադորի նախագահ Ռաֆայել Կոռեան օգոստոսի 20-ին Գվատեմալա կատարած այցելության ժամանակ հաստատել է, որ իր երկիրը Լոնդոնում իր դեսպանատան շենքում ապաստան է տրամադրել արդեն երկու տարի այնտեղ գտնվող WikiLeaks կայքէջի հիմնադիր Ջուլիան Ասանժին: Կոռեայի խոսքերով՝ դա արվել է պատշաճ իրավական արարողակարգի բացակայության կապակցությամբ Ասանժի կյանքին սպառնացող վտանգի պատճառով, նշում է Notimex գործակալությունը:**

**Կոռեան միաժամանակ ընդգծել է, որ Ասանժի ճակատագիրը Մեծ Բրիտանիայի ձեռքին է, որը կարող է երկրից ազատորեն հեռանալու հնարավորություն տալ նրան:**

**Ասանժի փաստաբան Ջենիֆեր Ռոբինսոնը նախօրեին Ավստրալիայի հեռուստատեսությանը տված հարցազրույցում հայտարարել էր, որ Ասանժը չի հեռանա Լոնդոնում էկվադորի դեսպանատնից, քանի դեռ երաշխիք չի ստացել, որ իրեն չեն արտահանձնի ԱՄՆ-ին, որտեղ կարող է ցմահ բանտարկվել պետական գաղտնիքների հրապարակման մեղադրանքով: Ռոբինսոնի խոսքերով՝ երկու տարի փակ տարածքում մնալու հետեւանքով Ասանժի առողջական վիճակը վատացել է. նա տառապում է ստի անկանոն աշխատանքից, բարձր ճնշումից եւ հազի նոպաներից:**

Պ. Ք.

AZG NEW SHABAT.QXD 21/08/2014 22:44 Page 12



# «Ամառային ընթերցանություն» ծրագիր

Մեկնարկել է «Ամառային ընթերցանություն» ծրագիր, որը բոլոր նրանց համար է, ովքեր սիրում են կարդալ եւ կիսել իրենց կարդացածը ընկերոջ, ծանոթի ու անգամ անծանոթի հետ:

Ձեռք բերելով մեկ գիրք միջոցառմանը մասնակից որեւէ գրախանութից՝ հնարավորություն կստանաս կարդալուց հետո փոխանակելու այդ գիրքը ծրագրում ընդգրկված մեկ ուրիշ գրքով բոլոր այն վայրերում, որտեղ տեղադրված են «Ամառային ընթերցանություն» տնակ-գրադարանները:

Գրքի արժեքն է 2300 դրամ, որը գնելիս կստանաս քո անհատական «Ամառային ընթերցանություն» քարտը՝ ծրագրի մյուս փուլերին մասնակցելու համար:

Ամբողջ ամռան ընթացքում պարբերաբար ընթերցողը կարող է վերադառնալ գրքերի տնակի մոտ եւ անվճար փոխանակել գիրքը:

Ի դեպ, ծրագրում ներառված գրքերը մասնավորապես մանուկների եւ պատանիների համար են:

Ավելին, ուրախությամբ պետք է փաստենք, որ այս ծրագիրը դուրս է եկել Երեւանի սահմաններից եւ հասել մինչեւ մարզեր ու Լեռնային Ղարաբաղ:

Ամենաակտիվ մասնակիցներին սպասվում են հետաքրքրական անակնկալներ:

Այն կավարտվի օգոստոսի 31-ին:

Մ. Հ.

# ՀԲԸՄ-ՀԵԸ Լիբանանի սկաուտական եւ արենուտական խումբերը հայրենիքի մէջ

**ՀԲԸՄ-ՀԵԸ Լիբանանի Սկաուտական շարժումի 45 եւ ՀԵԸ-ի Սուրիոյ՝ Դամասկոսի, Հալէպի եւ Քամիշլիի շրջաններէն 27 սկաուտներ եւ արենուտներ, չորեքշաբթի, 9 յուլիս 2014-ին հասան մայր հայրենիք մասնակցելու ՀԲԸՄ-Անդրանիկ սկաուտական 7-րդ բանակումին Հայաստանի ՀԲԸՄ-ի սեփական Անդրանիկ բանակավայրին մէջ, որ տեւեց երկու շաբաթ: Հայաստանի մէջ անոնք միացան ՀԲԸՄ-ի զանազան մասնաճիւղերէ եկած իրենց սկաուտ եւ արենուտ ընկերներուն եւ եղբայրներուն: Բանակումին զանազան յայտագիրներուն կողքին, որոնք ընդգրկեցին սկաուտական գիտելիքներ, նաեւ այցելութիւններ տուին տարբեր տեսարժան վայրեր եւ կեդրոններ: Հոս տեղին է նշել, թէ 17 յուլիսին, ՀԵԸ-ի սկաուտներն ու արենուտները գլխաւորութեամբ ՀԵԸ-ի Լիբանանի վարիչ տնօրէն Գէորգ Սանթուրեանին եւ ՀԵԸ-ի Լիբանանի Կեդրոնական վարչութեան գանձապահ Վաչէ Մելքոնեանին այցելեցին Սփիւռքի նախարարութիւն եւ հանդիպում ունեցան նախարար տիկ. Հրանոյշ Յակոբեանի հետ, որ մեծապէս գնահատեց ՀԲԸՄ-ՀԵԸ-ի տարած ազգանուէր աշխատանքը եւ ինչպէս միշտ՝ խրախուսեց պատանիները որ միշտ այցելեն իրենց հայրենիքը եւ ամուր պահպանեն ընլան իրենց ազգային արժէքներուն: ՀԵԸ-ի արիները Պէյրութ վերադարձան չորեքշաբթի 23 Յուլիսին:**

# ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵՔ Ազգ-ին

**Հեռուստատեսությամբ, ռադիոյով, տպագիր մամուլով ու համացանցով Դուք հետեւում եք ազգային, տարածաշրջանային եւ միջազգային անցուդարձին,**

**Բայց ցանկանում եք այդ հարահոսի մեջ առանձնացված տեսնել նշանակալիցն ու կարեւորը,**

**Եվ ուզում եք դրանց շուրջ հավելյալ մանրամասնություններ, մեկնաբանություններ, վերլուծություն ու կարծիք իմանալ,**

**Ուրեմն՝ կարդացեք «Ազգ»:**

Մեր վերլուծաբանները, մեկնաբաններն ու թղթակիցները Ձեզ համար ձեռնհասորեն կանեն այդ գործը,

Մեր թարգմանիչները տարբեր լեզուներից Ձեզ կծանոթացնեն նաեւ միջազգային հեղինակություն վայելող վերլուծաբանների կարծիքին,

Մեր խմբագրությունը բծախնդիր ուշադրությամբ կծանոթանա նաեւ Ձեր տեսակետներին ու կարծիքին եւ կհրապարակի դրանք:

**Ուրեմն՝ բաժանորդագրվեք «Ազգ»ին:**

Ամեն ուրբաթ առավոտ, տարեկան 48 շաբաթ, ընդամենը 9000 դրամով, Դուք կարող եք Ձեր տանը, գրասենյակում կամ աշխատավայրում ստանալ «Ազգ»ի 16 էջանոց համարը, որի 4 էջը ամբողջովին հայ եւ օտար մշակույթին է նվիրված:

Կանոնավոր հետեւելու համար «**Ազգ**»ի հրապարակումներին՝ պարզապես դիմեք՝

- **Հայփոստի** (բաժանորդագրության բաժին, հեռախոս՝ 010-51.45.47) բաժանմունքներին,
- **Հայմամուլին** (010-45.07.61),
- **Պրես Ստենդին** (010-522.199):

Կարող եք դիմել նաեւ «**Ազգ**»ի տնօրենությանը՝ 010-58.29.60 եւ 077 55.63.85 հեռախոսահամարներով, կամ azg3@arminco.com եւ կամ azg@azg.am էլ. հասցեներով: «Ազգ օրաթերթ» ՍՊԸ-ի հաշվեհամարն է՝ «Յունիբանկ» ՓԲԸ՝ 24100102134400:

# ՀՀ կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ Քաղաքականության եւ իրավական ակտերի մշակման բաժնի Տնտեսագետ

**(1 թափուր պաշտոնի համար)**

**I. Հաշվետու է՝** Տնօրենին, տնօրենի տեղակալներին, բաժնի պետին

**II. Աշխատանքի նպատակը՝** նորմատիվ իրավական փաստաթղթերի վերանայման աշխատանքների իրականացում եւ դրանց վերաբերյալ առաջարկությունների տրամադրում

**III. Պարտականությունները՝**

1. Իրականացնել իր մասով սահմանված հանձնարարությունները՝ ընթացակարգերի վերանայման աշխատանքները իրավաբան/գործարար-փորձագետների հետ համատեղ՝ հաշվի առնելով ծրագրով հաստատված մեթոդական ընթացակարգերը եւ ժամկետները:
2. Կազմել վերանայվող իրավական ակտերի յուրաքանչյուր դեպքի համար անհրաժեշտ իրավական եւ վերլուծական տեղեկատվություն (եզրակացություն), եւ տալ ձեռնարկվելիք գործողությունների վերաբերյալ գրավոր առաջարկություն:
3. Իրավական ակտերի վերանայման ընթացքում գնահատել տնտեսական բնույթի հնարավոր բացասական ազդեցությունները պետ. եկամուտների վրա եւ գրավոր ներկայացնել բաժնի պետին:
4. Անհրաժեշտության դեպքում, խորհրդակցել շահագրգիռ կողմերի հետ յուրաքանչյուր իրավական ակտի վերանայման շուրջ:
5. Օժանդակել կառավարել վերանայվող եւ այլ փաստաթղթերի կանոնավոր հոսքը:
6. Վերլուծություններում եւ առաջարկություններում հաշվի առնել գենդերային հարցերը եւ գնահատել ազդեցությունը գենդերային խնդիրների վրա
7. Աշխատել կառավարման մարմինների աջակցման խմբի հետ, կազմակերպել եւ իրականացնել նրանց համար համապատասխան վերապատրաստումներ:
8. Արդիականացել էլեկտրոնային գիտելիքների կառավարման պորտալ համակարգում ընթացիկ աշխատանքը:

**IV. Աշխատանքի անմիջական ազդեցությունը՝** ծրագրով սահմանված իրավական ակտերի վերանայման գործընթացի որակի եւ արդյունավետության վրա

**V. Պատասխանատու է՝** ծրագրով դրված խնդիրների իրականացման ապահովման, էլեկտրոնային գիտելիքների համակարգում տեղեկատվության ամբողջականության եւ արժանահավատության, իր իրավասության շրջանակներում՝ ստանձնած աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման եւ մասնագիտական գիտելիքների եւ հմտությունների զարգացման համար, ինչպես նաեւ աշխատանքային գործունեության ընթացքում բացահայտված՝ իր մեղքով կատարված խախտումների հետեւանքով առաջացած վնասների համար

**VI. Հաղորդակցում՝**

**ա) հաղորդակցման առարկան՝** պարզաբանումների պահանջում, իրավիճակների քննարկում, խորհրդատվության ստացում եւ տրամադրում, իր տեսակետի ներկայացում տարբեր այսպիսիներում, վերապատրաստում

**բ) շփումների շրջանակը՝** գրասենյակի ներսում՝ ղեկավարություն, աշխատակիցներ եւ փորձագետների հետ, գրասենյակից դուրս՝ ծրագրով առնչվող ՀՀ գերատեսչությունների հետ:

**Որակավորման պահանջները**

**VII. Կրթությունը**

ՀՀ-ում կամ օտարերկրյա պետությունում դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի բարձրագույն ֆինանսա-տնտեսագիտական կամ հանրային կառավարման կրթության որակավորման աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը ՀՀ-ում իրականացվել են օրենքով սահմանված կարգով

**Մասնագիտական փորձը՝**

Կառավարման ոլորտի առնվազն 1 տարվա կամ առնվազն 3 տարվա մասնագիտական (տնտեսագետի) աշխատանքային ստաժ կամ միջազգային կազմակերպություններում առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ: (Միջազգային կազմակերպություններում աշխատանքային փորձը՝ առավելություն է):

**VIII. Գիտելիքներ եւ հմտություններ՝**

ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող օրենսդրություն

**ա) Օտար լեզվի իմացությունը՝** ռուսերեն եւ անգլերեն լեզուների լավ իմացություն

**IX. Տեխնիկական պահանջներ (ներառյալ համակարգչային ծրագրերը եւ սարքավորումը)՝** համակարգիչ, տպիչ սարք, բազմացնող սարք, հեռախոս (ներքին), քջջային, ներքին տեղեկատվական համակարգեր եւ ծրագրեր, համացանց

**X. Տեղեկատվական համակարգերից օգտվելու հմտությունները՝** Microsoft Office, ծրագրային ապահովման համապատասխան փաթեթներ

**Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետեւյալ փաստաթղթերը՝**

1) գրավոր դիմում՝ կցվում է
2) ինքնակենսագրություն՝ հայերեն լեզվով
3) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը, թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները
4) արական սեռի անձինք ներկայացնում են նաեւ զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր եւ զորակոչային տեղամասին կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք
5) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի
6) անձնագրի պատճենը
7) 2 բնութագիր (երաշխավորագիր)
8) աշխատանքային գրքույկի կամ աշխատանքային պայմանագրի պատճենը (պատճենները) կամ սահմանված կարգով տրված համապատասխան տեղեկանք

Հարազատության փուլ կիրավիրվեն միայն սույն հայտարարության եւ ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 1668-Ն որոշման պահանջներին համապատասխանող մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիները:

**Մրցույթը կանցկացվի 2014 թվականի սեպտեմբերի 22-ին, ժամը 15-ին, Սարյան 22 հասցեում, 10-րդ հարկ:**

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ անձնագրով: Փաստաթղթերի պատճենները ներկայացվում են բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են Սարյան 22 հասցեում, 10-րդ հարկ՝ երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի օրերին՝ ժամը 10.00-ից մինչեւ 12.00-ը, հինգշաբթի, ուրբաթ օրերին՝ ժամը 15.00-ից մինչեւ 17.00-ը:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2014 թվականի սեպտեմբերի 19-ը ներառյալ:

Լրացուցիչ տեղեկություններ համար զանգահարել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ՝ 53-22-57 (ներքին՝ 100) հեռախոսահամարով:

**Դիմումի ձեւը տեղադրված է www.regulations.am կայքում:**

# Խնդակցություն

Մեր շնորհալի աշխատակից, լրագրող Հովիկ Աֆյանը եւ տիկինը՝ նույնպես լրագրող Աիդա Մեսրոպյանը բախտավորվել են առաջնեկ դստրիկով՝ **Լիլիթ**: Ողջունում ենք փոքրիկի ծնունդը եւ մաղթում քաջառողջություն ու երջանկություն:

www.armcongress.am

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԳ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ «ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահութիւն (գրավաճառ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գրաւոր են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010



Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 25.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 21.8.2014, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: